

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի
Որոշում N 1/149Ա
16/02/2011

«ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ» ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ» ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

1. Հավանության արժանացնել «Իրացվելիության ռիսկի կառավարման ձեռնարկը» (կցվում է):
2. Հանձնարարել Կենտրոնական բանկի Հասարակայնության հետ կապերի ծառայությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում ապահովել «Իրացվելիության ռիսկի կառավարման ձեռնարկի» տեղադրումը ՀՀ կենտրոնական բանկի տնային էջում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ՝

Արթուր Զավադյան

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Իրացվելիության ռիսկի կառավարման ձեռնարկ

Սույն ձեռնարկը նախատեսված է բանկերում իրացվելիության ռիսկի կառավարման գործընթացը կազմակերպելու, ինչպես նաև իրացվելիության ռիսկի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար: Այն կրում է ոչ թե նորմատիվային, այլ խորհրդատվական բնույթ: Սույն ձեռնարկով առաջնորդվելու դեպքում բանկը կարող է բարելավել իրացվելիության ռիսկի հայտնաբերմանը, չափմանը, վերլուծությանը և կառավարմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը: Ձեռնարկում ամփոփված են իրացվելիության ռիսկի կառավարման միջազգայնորեն ընդունված սկզբունքները և չափանիշները, որոնք կարող են ուղենիշ հանդիսանալ բանկերի համար:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ներածություն.....	3
Գլուխ 1. Իրացվելիության ռիսկի կառավարման սկզբունքները.....	5
Սկզբունք 1.....	5

Սկզբունք 2.....	5
Սկզբունք 3.....	6
Սկզբունք 4.....	7
Սկզբունք 5.....	9
Սկզբունք 6.....	10
Սկզբունք 7.....	11
Սկզբունք 8.....	17
Սկզբունք 9.....	18
Սկզբունք 10.....	19
Սկզբունք 11.....	23
Սկզբունք 12.....	26
Սկզբունք 13.....	29
Սկզբունք 14.....	30
Սկզբունք 15.....	31
Սկզբունք 16.....	31
Սկզբունք 17.....	35
Սկզբունք 18.....	37
Սկզբունք 19.....	40
Սկզբունք 20.....	41
Գլուխ 2. Իրացվելիության բուֆեր.....	44
Իրացվելիության բուֆերի հասկացությունը.....	44
Բուֆերի չափի մասին ենթադրություններ.....	45
Բուֆերի կառուցումը.....	46
Իրացվելիության ծածկույթի գործակիցը և Չուտ կայուն ֆինանսավորման գործակիցը.....	49
Հավելված 1. Դրամական հոսքեր և դրանց հարթեցումներ.....	52
Հավելված 2. Ի՞նչ են իրենցից ներկայացնում շուկայում առկա բարձր որակի իրացվելի ակտիվները.....	55

Ն ե ր ա ծ ու թ յ ու ն

Իրացվելիությունը կամ բանկի՝ ակտիվների աճը ֆինանսավորելու և առանց էական կորուստների պարտավորությունները ժամանակին մարելու կարողությունը, շատ է կարևորվում յուրաքանչյուր բանկի կենսունակության տեսանկյունից: Բանկերը, վերափոխելով կարճաժամկետ պարտավորությունները երկարաժամկետ ակտիվների, ենթարկվում են իրացվելիության ռիսկի: Ըստ այդմ, իրացվելիության կառավարումը հանդիսանում է բանկի կարևորագույն խնդիրներից մեկը: Յուրաքանչյուր բանկ պետք է ձևավորի իրացվելիության ռիսկի կառավարման իր մոտեցումները՝ կախված մի շարք գործոններից, այդ թվում՝ բանկի չափերից և նրա կողմից իրականացվող գործառնությունների բնույթից, ծավալներից ու բարդությունից, ինչպես նաև ֆինանսական շուկայի առանձնահատկություններից: Մասնավորապես, կառավարման ինֆորմացիոն համակարգերը (MIS), այլընտրանքային սցենարների ժամանակ ֆինանսական միջոցների նկատմամբ պահանջների վերլուծությունները, ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիան և չնախատեսված իրադարձությունների պլանավորումը հանդիսանում են բանկի իրացվելիության արդյունավետ կառավարման կարևոր տարրեր՝ անկախ բանկի չափերից և գործառնությունների շրջանակներից: Բնականաբար, տեղեկատվական համակարգերը և վերլուծությունները, որոնք անհրաժեշտ են նշված միջոցառումներն իրականացնելու համար, կպահանջեն ավելի քիչ ռեսուրսներ և կլինեն ավելի պարզ այն բանկերի համար, որոնք իրենց չափերով փոքր են կամ գործում են ավելի փոքր շուկաներում, քան ավելի մեծ և բազմակողմանիորեն գործող բանկերի համար:

Իրացվելիության արդյունավետ կառավարումը կարող է նվազեցնել բանկում լուրջ խնդիրների առաջացման հավանականությունը: Անկասկած, իրացվելիության կարևորությունը կայանում է նաև նրանում, որ մեկ առանձին բանկում իրացվելիության անբավարարությունը կարող է իր ազդեցությունն ունենալ ամբողջ բանկային և նույնիսկ ֆինանսական համակարգի վրա: Այս պատճառով, իրացվելիության վերլուծությունները բանկի ղեկավարությունից պահանջում են ոչ միայն չափել և գնահատել բանկի իրացվելիությունն ամենօրյա գործունեության ընթացքում, այլև ուսումնասիրել, թե ինչպես կարող են բանկի ֆինանսական պահանջումները փոփոխվել տարբեր սցենարների դեպքում, հատկապես անբարենպաստ պայմաններում:

Վերջին ժամանակներում տեղի ունեցած տեխնոլոգիական և ֆինանսական նորամուծությունները բանկերին թույլ են տվել գտնել նոր ուղիներ՝ ֆինանսավորելու իրենց գործունեությունը և կառավարելու իրացվելիությունը: Բացի այդ, հիմնականում ավանդների վրա հիմնվելու հնարավորության նվազումը, ամբողջ աշխարհում ֆինանսական շուկաների վերջին անկումները փոփոխել են իրացվելիության ընկալումը բանկերի մոտ: Այս ամենը նոր մարտահրավերներ է նետել բանկերին:

Իրացվելիության ռիսկն այն ներկա կամ ապագա հավանականությունն է, երբ բանկն ի վիճակի չի լինի ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջներն առանց լրացուցիչ կորուստներ կրելու, ինչը բացասաբար կազդի բանկի շահույթի և/կամ կապիտալի վրա: Այս սահմանումն ընդհանուր է, ուստի բանկերը կարող են ներքին օգտագործման նպատակով տալ իրացվելիության ռիսկի սեփական

սահմանումը: Սակայն շատ կարևոր է, որպեսզի բանկը հստակ պատկերացնի իրացվելիության ռիսկի ընդգրկման շրջանակները՝ վերջինիս կառավարումն իրականացնելու համար:

Իրացվելիության ռիսկն առաջանում է նաև այն ժամանակ, երբ բանկն ի վիճակի չի լինում կանխատեսել և արձագանքել շուկայական պայմանների այն փոփոխություններին, որոնք ազդում են բանկի կողմից ակտիվների արագ և նվազագույն կորուստներով իրացման վրա:

Ինչպես և այլ ռիսկերի կառավարման պարագայում, իրացվելիության ռիսկի կառավարումը ենթադրում է բանկի կողմից որոշակի քաղաքականության ընդունում, բանկի խորհրդի և գործադիր մարմնի¹ արդյունավետ հսկողություն, ինչպես նաև ռիսկի ճանաչում, գնահատում, մոնիթորինգ և կառավարում/նվազեցում:

¹ Սույն ձեռնարկում օգտագործված «բանկի խորհուրդ» և «գործադիր մարմին» հասկացությունները ունեն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված նշանակությունը:

Գլուխ 1. Իրացվելիության ռիսկի կառավարման սկզբունքները

Բանկերում իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով ինչպես տարբեր առանձին երկրների կարգավորիչ մարմինների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների կողմից մշակվել են մի շարք սկզբունքներ, որոնք կօգնեն բանկին և վերջինիս ղեկավարությանը՝ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ իրացվելիության ռիսկի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Սույն ձեռնարկի մշակման համար հիմք են հանդիսացել Բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի (Basel Committee on Banking Supervision, BCBS) և Եվրոպական բանկային վերահսկողների կոմիտեի (Committee of European Banking Supervisors, CEBS) կողմից մշակված և հրապարակված աշխատանքային փաստաթղթերն ու հետազոտական նյութերը:

ՄԿԶԲՈՒՆՔ 1. Բանկը պատասխանատու է իրացվելիության ռիսկի կառավարման համար: Բանկը պետք է ձևավորի իրացվելիության ռիսկի կառավարման այնպիսի կառուցվածք, որը կապահովի բանկում իրացվելիության բավարար մակարդակ, ներառյալ բարձր որակի իրացվելի ակտիվները², դիմակայելու համար ստրեսային իրավիճակներին:

Բանկում պետք է ներդրված լինի իրացվելիության ռիսկի կառավարման համարժեք կառուցվածք, որը պետք է ինտեգրված լինի բանկի ամբողջական ռիսկի կառավարման գործընթացի մեջ: Իրացվելիության ռիսկի կառավարման հիմնական նպատակը բանկի կողմից իր ամենօրյա իրացվելիության պարտավորությունները կատարելու ունակության մեջ համոզվելն ու իրացվելիության ստրեսներին դիմակայելն է, որոնց աղբյուր կարող են հանդիսանալ ինչպես բանկին հատուկ, այնպես էլ շուկայում տեղի ունեցող իրադարձությունները: Բանկը պետք է համոզվի, որ իր իրացվելիությունը համապատասխանում է իր հաշվեկշռային և արտահաշվեկշռային գործառնություններին, իր գործունեության դիվերսիֆիկացմանը և ֆինանսավորման ռազմավարություններին: Բանկը պետք է կիրառի համապատասխան ենթադրություններ իր ակտիվների յուրացվելիության, ֆինանսավորման հասանելիության վերաբերյալ ինչպես նորմալ, այնպես էլ ստրեսային իրավիճակներում:

ՄԿԶԲՈՒՆՔ 2. Յուրաքանչյուր բանկ պետք է ունենա ներդրված ռազմավարություն իրացվելիության ամենօրյա կառավարման համար: Այդ ռազմավարությունը պետք է հասանելի լինի ամբողջ կազմակերպությունում:

Բանկի գործունեության կարևորագույն ուղղություններից է իրացվելիության ձևավորումը: Բանկի գործառնությունների մեծ մասն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կախված է բանկի՝ իր հաճախորդներին ֆինանսական միջոցներ տրամադրելու ունակությունից: Բանկերն այսպիսով խոցելի են ինչպես կոնկրետ բանկին, այնպես էլ ընդհանուր շուկային հատուկ իրացվելիության խնդիրների

² Ակտիվները բարձր որակի դասելու չափանիշները բերված են Հավելված 2-ում:

նկատմամբ: Ըստ էության, բանկի ցանկացած ֆինանսական գործառնություն իր ազդեցությունն է ունենում բանկի իրացվելիության վրա: Հենց այս տեսանկյունից էլ բանկերը պետք է ուշադիր լինեն իրենց իրացվելիության ռազմավարության, քաղաքականությունների և կառավարման մոտեցումների նկատմամբ: Իրացվելիության ռազմավարությունը պետք է սահմանի բանկի ընդհանուր մոտեցումներն իրացվելիության նկատմամբ, ներառյալ՝ տարբեր որակական և քանակական թիրախներ: Ռազմավարությունը պետք է ուղղված լինի բանկի նպատակներին՝ պաշտպանելու ֆինանսական կայունությունը և կարողությունը՝ դիմագրավելու շուկայում տեղի ունեցող ստրեսային իրավիճակներին:

Բանկի իրացվելիության ռազմավարությունը պետք է սահմանի իրացվելիության կառավարման առանձին ոլորտների (ակտիվների և պարտավորությունների ամբողջության, տարբեր արժույթներով և երկրից երկիր իրացվելիության կառավարման մոտեցում, կոնկրետ ֆինանսական գործիքների օգտագործման հնարավորության, ակտիվների իրացվելիության և յուրացվելիության) հստակ քաղաքականություններ: Բանկում պետք է նաև առկա լինի ռազմավարություն ժամանակավոր և երկարաժամկետ իրացվելիության խնդիրներին դիմակայելու վերաբերյալ:

Իրացվելիության ռիսկի կառավարման ռազմավարությունը պետք է ներդրված լինի ամբողջ կազմակերպությունում, մասնավորապես նաև այն պատճառով, որ շատ բանկերում իրացվելիության կառավարումը չի հանդիսանում միայն գանձապետների պատասխանատվությունը (treasury responsibility): Բացի այդ, բանկային նոր պրոդուկտները կամ բիզնես-ռազմավարությունները, ինչպիսիք է օրինակ արժեթղթավորումը, կարող են ունենալ կարևոր և երբեմն համակողմանի ազդեցություն բանկի իրացվելիության ռիսկի վրա: Գործառնական համակարգի խափանումները ևս կարող են էականորեն ազդել իրացվելիության ռիսկի վրա: Բանկի բոլոր ստորաբաժանումները պետք է հստակ տեղյակ լինեն բանկի իրացվելիության ռազմավարության մասին և գործեն հաստատված քաղաքականությունների, ընթացակարգերի և սահմանների ներքո:

Բանկի տնօրինությունը և անձնակազմը պետք է հստակ պատկերացնեն, թե ինչպես են այլ ռիսկերը (օրինակ՝ վարկային, շուկայական և գործառնական ռիսկեր) ազդում բանկի ընդհանուր իրացվելիության ռիսկի և վերջինիս կառավարման քաղաքականության վրա: Օրինակ, հաճախորդների հետ ծագած վարկային խնդիրները կարող են ազդել կանխատեսվող դրամական ներհոսքերի ծավալի վրա և պարտադրել բանկին ձեռնարկել լրացուցիչ գործողություններ՝ կանխատեսված ներհոսքերի մակարդակն ապահովելու նպատակով:

ՄԿԶԲՈՒՆՔ 3. Բանկը պետք է հստակորեն արտահայտի/սահմանի իր իրացվելիության ռիսկի ընդունելի մակարդակը, որը պետք է համարժեք լինի բանկի բիզնես ռազմավարությանը և դերին ֆինանսական համակարգում:

Բանկի տնօրենների խորհուրդը և բանկի տնօրինությունը պատասխանատու են բանկի կողմից կրած իրացվելիության ռիսկի և այն քայլերի համար, որը ձեռնարկում է բանկը ռիսկը կառավարելու համար: Ռիսկի ընդունելի մակարդակը (որը պետք է սահմանի իրացվելիության ռիսկի այն աստիճանը, որը բանկը պատրաստ է կրել)

պետք է արտացոլի բանկի ֆինանսական վիճակը և ֆինանսավորման հնարավորությունները: Այն պետք է համոզի, որ բանկը նորմալ պայմաններում կառավարում է իր իրացվելիությունն այնպես, որ պատրաստ կլինի դիմակայել երկարատև ստրեսներին: Ռիսկի նկատմամբ «հանդուրժողականությունը» պետք է արտահայտվի այնպես, որ կառավարման յուրաքանչյուր մակարդակ հստակորեն կարողանա հասկանալ ռիսկերի և օգուտների միջև եղած հարաբերակցությունը (trade-off between risks and profits): Գոյություն ունեն մի շարք քանակական և որակական ուղիներ, որոնց միջոցով բանկը կարող է արտահայտել իր «հանդուրժողականությունը» ռիսկերի հանդեպ:

ՄԿՁԲՈՒՆՔ 4. Բանկի տնօրենների խորհուրդը պետք է սահմանի համապատասխան քաղաքականություն՝ կառավարելու համար բանկի իրացվելիության ռիսկը բանկի՝ ռիսկի նկատմամբ ունեցած հանդուրժողականությանը համապատասխան, ինչպես նաև համոզվի, որ բանկն ունի բավարար իրացվելիություն: Բանկի գործադիր տնօրինությունը պետք է պարբերաբար ուսումնասիրության ենթարկի բանկի իրացվելիության վերաբերյալ տեղեկատվությունը և պարբերաբար զեկուցի տնօրենների խորհրդին: Բանկի խորհուրդը պետք է վերանայի բանկի իրացվելիության կառավարման քաղաքականությունը առնվազն տարին մեկ անգամ և համոզվի, որ բանկի գործադիր տնօրինությունն արդյունավետորեն է կառավարում իրացվելիության ռիսկը:

Ռազմավարությունը պետք է ներառի իրացվելիության կառավարման առանձին ասպեկտներին ուղղված քաղաքականություններ, ինչպիսիք են. ակտիվների և պարտավորությունների կազմն ու ժամկետայնությունը, ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիա և կայունություն, իրացվելիության կառավարում՝ ըստ տարբեր արժույթների, երկրների, ոլորտների և անձանց, իրացվելիության ամենօրյա կառավարման մոտեցումներ, ակտիվների իրացվելիության և յուրացվելիության վերաբերյալ ենթադրություններ: Ռազմավարությունը պետք է հաշվի առնի իրացվելիության նկատմամբ պահանջը ինչպես շուկայի նորմալ, այնպես էլ ստրեսային պայմաններում, ինչը կարող է հետևանք լինել թե՛ բանկին, թե՛ շուկային հաստուկ գործոնների և թե՛ այդ երկուսի համակցության: Բանկի խորհուրդը պետք է հաստատի իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը և վերանայի այն առնվազն տարին մեկ անգամ: Խորհուրդը պետք է համոզված լինի, որ տնօրինությունը և համապատասխան աշխատակիցներն ունեն բավականաչափ որակավորում, և որ բանկն ունի ընթացակարգեր և համապատասխան համակարգեր՝ չափելու, դիտարկելու (մոնիթորինգի ենթարկելու) և հսկելու իրացվելիության ռիսկի աղբյուրները:

Իրացվելիության ռազմավարությունը պետք է համապատասխանի բանկի գործունեության բնույթին, ծավալներին և բարդությանը: Ռազմավարությունը մշակելիս բանկը պետք է հաշվի առնի իրավական կառուցվածքը (օրինակ՝ օտարերկրյա մասնաճյուղերի և օտարերկրյա դուստր ընկերությունների ամբողջությունը), գործունեության հիմնական ոլորտները, շուկաների, պրոդուկտների ծավալն ու բազմազանությունը, մայր և ընդունող երկրների կարգավորման պահանջները:

Բանկի տնօրինությունը պետք է որոշի իրացվելիության ռիսկի կառավարման կառուցվածքը³, ինչպես նաև իրացվելիության դիրքերի հսկողության կառուցվածքը, դրանց նկատմամբ պատասխանատվությունը և վերահսկողությունը բանկի բոլոր մասնաճյուղերի և դուստր կազմակերպությունների մոտ, ինչպես նաև պետք է նշված տարրերը հստակորեն ներառի բանկի իրացվելիության կառավարման քաղաքականությունների մեջ: Իրացվելիության կառավարման կառուցվածքը պետք է հաշվի առնի միջոցների շրջանառության վրա դրված ցանկացած իրավական, կարգավորման կամ գործառնական սահմանափակումներ: Երբ խումբը բաղկացած է բանկ և ոչ բանկ հանդիսացող կազմակերպություններից, խմբի մակարդակով տնօրինությունը պետք է պարզ հասկանա իրացվելիության ռիսկի տարբեր բնութագրիչները, որոնք հատուկ են առանձին կազմակերպություններին՝ ելնելով ինչպես գործունեության բնույթից, այնպես էլ վերահսկողական դաշտից: Անկախ ընտրված կառուցվածքից, բանկի տնօրինությունը պետք է ունակ լինի պարբերաբար վերահսկել իրացվելիության ռիսկը բանկի խմբում և առանձին կազմակերպությունում: Պետք է ներդրված լինեն համապատասխան ընթացակարգեր, որոնք ապահովեն, որ բանկի տնօրինությունը ակտիվ վերահսկում և անհապաղ արձագանքում է խմբում տեղի ունեցող բոլոր էական փոփոխություններին (զարգացումներին) և անհրաժեշտության դեպքում զեկուցում է տնօրենների խորհրդին:

Բանկի իրացվելիության ռազմավարությունը, այդ ռազմավարությունը ներդնելու քաղաքականությունները և իրացվելիության ռիսկի կառավարման կառուցվածքը պետք է բանկի տնօրինության կողմից ներդրվի ամբողջ կազմակերպության մասշտաբով: Այն բոլոր ստորաբաժանումները, որոնց գործունեությունը կարող է ազդել բանկի իրացվելիության վրա, պետք է տեղյակ լինեն բանկի որդեգրած ռազմավարությանը և գործեն հաստատված քաղաքականությունների, ընթացակարգերի, սահմանաչափերի և հսկողության ներքո: Իրացվելիության ռիսկի կառավարման համար պատասխանատու անձինք պետք է մշտական կապերի մեջ լինեն շուկայական պայմանները ուսումնասիրող և այլ կարևոր տեղեկատվության հասանելիություն ունեցող անձանց, օրինակ վարկային ռիսկի կառավարիչների հետ: Ավելին, իրացվելիության ռիսկը և վերջինիս հնարավոր փոխկապակցվածությունը այլ ռիսկերի հետ պետք է գտնվի ռիսկերի կառավարման կոմիտեի և/կամ անկախ ռիսկերի կառավարչի գործառույթների կենտրոնում:

Բանկի տնօրինությունը պետք է համոզվի, որ բանկն ունի ադեկվատ/համարժեք ներքին հսկողություն՝ ապահովելու համար իրացվելիության ռիսկի կառավարման գործընթացի ամբողջականությունը: Բանկի տնօրինությունը պետք է համոզվի, որ գործառնականորեն անկախ (operationally independent), համապատասխանաբար վերապատրաստված և իրազեկված անձնակազմը պատասխանատու է ներքին հսկողության ներդրման համար: Կարևոր է, որ անկախ հսկողության գործառույթներ

³ Կառավարման կառուցվածքն իրենից ներկայացնում է ռիսկի կառավարմամբ զբաղվող ստորաբաժանման (և/կամ առանձին աշխատակցի) առկայությունն ու կառուցվածք՝ հաշվի առնելով վերջիններիս իրավունքների և պարտականությունների շրջանակների սահմանումը, ինչպես նաև նրանց կողմից ռիսկի կառավարման իրականացման իրավասությունների կենտրոնացվածության աստիճանի որոշումը:

ունեցող անձնակազմը ունենա հմտություն և իրավասություն՝ մշակել առանձին ստորաբաժանումներից ստացված տեղեկատվությունը և կատարել համապատասխան ենթադրություններ ու կանխատեսումներ: Այն դեպքերում, երբ էական փոփոխությունները ազդում են հսկողության արդյունավետության վրա, և պահանջվում են ներքին հսկողության վերանայումներ և բարեփոխումներ, բանկի տնօրինությունը պետք է համոզվի, որ անհրաժեշտ փոփոխություններն իրականացվում են ճիշտ ժամանակին: Բանկի ներքին սուղիտը պետք է պարբերաբար դիտարկի իրացվելիության ռիսկի հսկողության ներդրումն ու վերջինիս արդյունավետությունը:

Բանկի տնօրինությունը պետք է հետևի շուկայում տեղի ունեցող ընթացիկ և պոտենցիալ զարգացումներին, որոնք կարող են ներկայացնել էական, անկանխատեսելի մարտահրավեր իրացվելիության ռիսկի կառավարման համար, այնպես, որ ըստ անհրաժեշտության կարողանա կատարել համապատասխան և ճիշտ ժամանակին փոփոխություններ իրացվելիության կառավարման քաղաքականությունների մեջ: Բանկի տնօրինությունը պետք է սահմանի հատուկ ընթացակարգեր՝ քաղաքականություններից և սահմանաչափերից բացառություններ իրականացնելու համար: Տնօրինությունը պետք է համոզվի, որ սթրես-թեստերը, արտակարգ իրավիճակներում ֆինանսավորման պլանները և իրացվելիության «բարձիկները» արդյունավետ են և համապատասխանում են բանկին:

Բանկի խորհուրդը պետք է դիտարկի (review) բանկի իրացվելիության դիրքերի վերաբերյալ ներկայացվող պարբերական հաշվետվությունները: Խորհուրդը պետք է անհապաղ տեղեկացվի իրացվելիության հետ կապված նոր և/կամ զարգացող հիմնախնդիրների մասին: Վերջիններիս մեջ մտնում են ֆինանսավորման աճող ծախսերն ու կենտրոնացումները, ֆինանսավորման ճեղքվածքի աճող չափերը, իրացվելիության այլընտրանքային աղբյուրների վերացումը, սահմանաչափերի էական և/կամ շարունակական խախտումները, բարձր իրացվելի ակտիվների էական անկումները կամ արտաքին շուկայի պայմաններում տեղի ունեցող այնպիսի փոփոխությունները, որոնք կարող են ապագա դժվարությունների ազդակ հանդիսանալ: Խորհուրդը պետք է համոզվի, որ բանկի տնօրինությունը ձեռնարկում է համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ նշված խնդիրների ուղղությամբ:

ՄԿԶԲՈՒՆԶ 5. Բանկը պետք է իր կողմից մատուցվող ծառայությունների ներքին գնագոյացման, նոր պրոդուկտների հաստատման ընթացակարգերում ներառի իրացվելիության ծախսերը, օգուտները և ռիսկերը բոլոր էական գործառնությունների գծով (հաշվեկշռային և արտահաշվեկշռային)՝ դրանով համահարթեցնելով կոնկրետ ստորաբաժանման ռիսկի հակվածությունը այն իրացվելիության ռիսկի հետ, որն առաջացնում է տվյալ ստորաբաժանման գործունեությունը ամբողջ բանկի համար:

Բանկի տնօրինությունը պետք է համոզվի, որ բանկի իրացվելիության կառավարման գործընթացը ներառում է իրացվելիության ծախսերի, օգուտների և ռիսկերի չափումը բոլոր էական գործառնությունների գծով՝ ներառյալ այն գործառնությունները, որոնք վերաբերում են հնարավոր այնպիսի գործողությունների առաջացմանը, որոնք կարող են ոչ անմիջապես անուղղակի ազդեցություն ունենալ բանկի հաշվեկշռի վրա:

ՄԿՁԲՈՒՆՔ 6. Յուրաքանչյուր բանկ պետք է ունենա ղեկավարման այնպիսի կառուցվածք, որը թույլ կտա արդյունավետորեն կիրառել իրացվելիության կառավարման քաղաքականությունները: Այս կառուցվածքում պետք է մշտապես ներառվեն բանկի գործադիր մարմնի անդամներ: Գործադիր մարմինը պետք է համոզվի, որ իրացվելիությունն արդյունավետորեն կառավարվում է, և մշակված են համապատասխան քաղաքականություններ և ընթացակարգեր իրացվելիության ռիսկը վերահսկելու և սահմանափակելու նպատակով: Բանկերը պետք է սահմանեն և պարբերաբար վերանայեն իրենց իրացվելիության դիրքերի սահմանաչափերը:

Ինչպես և այլ ռիսկերի կառավարման դեպքում, բանկը պետք է ունենա իրացվելիության կառավարման կառուցվածք՝ բանկի իրացվելիության ռազմավարությունը, քաղաքականություններն ու ընթացակարգերն արդյունավետորեն կիրառելու նպատակով: Բանկի իրացվելիության կառավարման պատասխանատվությունը պետք է դրվի բանկի կոնկրետ ստորաբաժանման վրա: Այն կարող է լինել Ակտիվների/պարտավորությունների կոմիտեն (Asset/Liability Committee)՝ կազմված բանկի գործադիր տնօրինության անդամներից, կամ ռիսկի կառավարման ղեկարտամենտը: Բոլոր դեպքերում, բանկում պետք է ներդրված լինի հակակշիռների համապատասխան մեխանիզմ:

Բանկերում պետք է մշակվի իրացվելիության հաճախակի, ինչպես նաև ոչ շատ հաճախ, բայց առավել խորությամբ վերլուծության ժամանակացույց: Այս վերլուծությունները հնարավորություն են տալիս վերամշակել բանկի իրացվելիության քաղաքականությունները և պրակտիկան՝ հաշվի առնելով բանկի փորձը և բիզնեսի հետագա զարգացումները:

Բանկի տնօրինությունը պետք է կայացնի համապատասխան որոշումներ՝ կապված իրացվելիության կառավարման կառուցվածքի հետ: Այն կարող է կատարելապես կենտրոնացնել իրացվելիության կառավարումը կամ ապակենտրոնացնել այն առանձին ստորաբաժանումների մոտ՝ ըստ յուրաքանչյուրի իրացվելիության մակարդակի (գործադիր մարմնի կողմից հաստատված սահմաններում), կամ կիրառել նշված երկու մոտեցումների համադրությունը: Բոլոր դեպքերում, ղեկավարման կառուցվածքը պետք է լինի բավարար ճկուն՝ դրանով իսկ հավաստելով, որ խորհրդի կողմից հաստատված իրացվելիության կառավարման քաղաքականությունները հնարավոր է արդյունավետորեն կիրառել: Այնուամենայնիվ, անկախ կիրառվող կառուցվածքից, կարևոր է, որ հստակ համագործակցություն լինի իրացվելիության պատասխանատուների, շուկայական պայմաններն ուսումնասիրողների, ինչպես նաև կարևոր տեղեկատվությանը իրավասություն ունեցող աշխատակիցների միջև, ինչպիսիք են վարկային ռիսկի կառավարիչները: Սա հատկապես կարևոր է սթրես-սցենարների մշակման և վերլուծության ժամանակ:

Բանկի ղեկավարությունը պետք է սահմանի սահմանաչափեր համարժեք իրացվելիությունը հավաստելու նպատակով, և այդ սահմանաչափերը պետք է վերահսկվեն ինչպես բանկի ներքին աուդիտի, այնպես էլ վերահսկողների կողմից: Սահմանաչափերը կարող են սահմանվել, օրինակ, հետևյալների համար.

- Ընդհանուր դրամական հոսքերի անհամապատասխանություններ (այսինքն՝ ընդհանուր ֆինանսական միջոցների նկատմամբ պահանջները՝ որպես

տոկոս ընդհանուր պարտավորությունների նկատմամբ) կոնկրետ ժամանակահատվածների համար (հաջորդ օր, հաջորդ 5 օր, հաջորդ ամիս և այլն): Այս անհամապատասխանությունները պետք է հաշվարկվեն՝ հաշվի առնելով իրացվելի ակտիվների յուրացվելիությունը, գների որոշակի նվազումը՝ հարկադիր և հապճեպ վաճառքի դեպքում, և այլն:

- Իրացվելի ակտիվների՝ որպես տոկոս կարճաժամկետ պարտավորությունների նկատմամբ: Այստեղ ևս պետք է հաշվի առնվեն գների հնարավոր տատանումները: Այս խմբում ներառված ակտիվները պետք է լինեն բարձր իրացվելի, այսինքն միայն այն ակտիվները, որոնց համար, ըստ գնահատականների, մշտապես գոյություն ունի իրացման շուկա, նույնիսկ ստրեսների ժամանակ:

Բանկերը պետք է վերլուծեն տարբեր սթրես-սցենարների հնարավոր ազդեցությունը իրենց իրացվելիության դիրքերի վրա և սահմանեն իրենց սահմանաչափերը՝ համաձայն նշված վերլուծությունների: Սահմանաչափերը պետք է համապատասխանեն բանկի չափերին, իրականացվող գործառնությունների բնույթին և չափերին, ինչպես նաև բանկի ֆինանսական վիճակին: Բանկի ղեկավարությունը պետք է հաստատի սահմանված քաղաքականություններից և սահմանաչափերից բացառություններ կիրառելու դեպքում հատուկ ընթացակարգեր և հավանությունների տրամադրման կարգ:

Բանկի գործադիր մարմինը պետք է համոզված լինի, որ բանկում գործում է աղեկվատ/համարժեք ներքին հսկողություն՝ պահպանելու համար ձևավորված իրացվելիության ռիսկի կառավարման գործընթացների ամբողջականությունը:

ՄԿՁԲՈՒՆՔ 7. Բանկը պետք է ունենա մշակված գործընթացներ իրացվելիության ռիսկի բացահայտման, չափման, մոնիթորինգի և հսկողության համար: Այս գործընթացները պետք է ներառեն հատակ կառուցվածք ակտիվներից, պարտավորություններից և արտահաշվեկշռային հոդվածներից առաջացող դրամական հոսքերի՝ որոշակի ժամանակային հորիզոնով համակողմանի պլանավորման համար:

Բանկը պետք է ճանաչի և հաշվի առնի իրացվելիության ռիսկի և բանկի այլ ռիսկերի միջև առկա հնարավոր փոխկապակցվածությունները: Ֆինանսական և գործառնական ռիսկերի տարբեր տեսակները (օրինակ՝ տոկոսադրույքի, վարկային, գործառնական, իրավական և բարի համբավի ռիսկեր) կարող են ազդել բանկի իրացվելիության վրա: Իրացվելիության ռիսկը հաճախ կարող է ծագել բանկի կողմից ռիսկերի այլ տեսակների կառավարման թերացումների հետևանքով:

Իրացվելիության չափումը ներառում է բանկի կանխիկի ներհոսքերի և արտահոսքերի գնահատումը, ինչպես նաև իր ակտիվների իրացվելիության արժեքի որոշումը, ինչը նպատակ է հետապնդում պարզել ապագա ֆինանսավորման հնարավոր անբավարարությունները: Բանկը պետք է կարողանա չափել և կանխատեսել իր սպասվելիք դրամական հոսքերը ակտիվների, պարտավորությունների, արտահաշվեկշռային հոդվածների և ածանցյալների համար

տարբեր ժամանակային հորիզոնների կտրվածքով ինչպես շուկայի նորմալ գործունեության, այնպես էլ տարատեսակ ստրեսային սցենարների ժամանակ:

Բանկը պետք է ճանաչի, գնահատի, ուսումնասիրի և վերահսկի իր իրացվելիության ռիսկի դիրքերը ըստ.

ա) ակտիվների և պարտավորությունների գծով ապագա դրամական հոսքերի,

բ) չնախատեսված իրացվելիության պահանջարկի աղբյուրների և արտահաշվեկշռային դիրքերի,

գ) արժույթների, որոնցով գործունեություն է ծավալում բանկը,

դ) թղթակցային, պահառուական և հաշվարկային գործառնությունների:

Ակտիվների և պարտավորությունների գծով ապագա դրամական հոսքեր

Բանկը պետք է ունենա իրացվելիության ռիսկի կառավարման համարժեք կառուցվածք, որը հնարավորություն կտա իրականացնել ապագա դրամական հոսքերի դինամիկ կանխատեսումներ, որը ներառում է նաև ենթադրություններ բանկի կոնտրագենտների հնարավոր գործողությունների վերաբերյալ շուկայում առկա պայմանների փոփոխությունների դեպքում: Բանկը պետք է իրականացնի իրատեսական ենթադրություններ իր ապագա իրացվելիության կարիքների մասին ինչպես կարճատև, այնպես էլ երկարատև ժամանակահատվածների համար՝ արտացոլված իր գործառնությունների, մատուցված ծառայությունների և գործունեության շուկաների ամբողջության մեջ: Բանկը պետք է վերլուծի իր ակտիվների որակը, որոնք կարող են օգտագործվել որպես գրավ, որպեսզի գնահատի դրանց՝ ֆինանսական միջոցներ մատակարարելու հնարավորությունները ստրեսային իրավիճակներում: Բանկը պետք է ջանք գործադրի կառավարելու ներհոսքերի և արտահոսքերի աղբյուրների ժամկետները, որպեսզի կարողանա ապահովել ֆինանսավորման աղբյուրների և ծախսերի ուղղությունների միջև պատշաճ համապատասխանություն:

Իր պարտավորություններից առաջացող դրամական հոսքերը գնահատելիս բանկը պետք է գնահատի իր ֆինանսավորման աղբյուրների «կոշտությունը», այսինքն ստրեսների ժամանակ դրանց չպակասելու հակումը: Բանկը պետք է նաև հաշվի առնի այն գործոնները, որոնք ազդում են ավանդների «կոշտության» վրա, ինչպիսիք են ավանդի չափերը, զգայունությունը տոկոսադրույքի նկատմամբ, ավանդատուների աշխարհագրական բաշխումը և այլն: Բացի այդ, ավանդների ապահովագրության ռեժիմների միջև տարբեր երկրներում առկա տարբերությունները կարող են էական ազդեցություն ունենալ ավանդների «կոշտության» վրա: Ստրեսների ժամանակ, ավանդների վերադարձի ծածկույթը և ավանդների հատուցման ռեժիմի ներքո հատուցման արագությունը կարող են ազդել ավանդատուների վարքագծի վրա:

Չնախատեսված իրացվելիության պահանջարկի աղբյուրները և արտահաշվեկշռային դիրքերը

Բանկը պետք է ճանաչի, չափի, և վերահսկի պոտենցիալ դրամական հոսքերը՝ կապված արտահաշվեկշռային հոդվածների և «չնախատեսված պարտավորությունների» հետ: Արտահաշվեկշռային հոդվածներից բխող

իրացվելիության ռիսկի կառավարումը բանկում ունի առանձնահատուկ կարևորություն՝ կապված բանկում վերջիններիս տարածվածության և այն դժվարությունների հետ, որոնք բանկերն ունենում են ստրեսային պահերին դրանք գնահատելիս: Այդպիսի հետհաշվեկշռային հողվածների թվին են պատկանում, օրինակ, ֆինանսական ածանցյալները և երաշխավորությունները:

Ֆինանսական ածանցյալներ

Բանկը պետք է իր իրացվելիության ռիսկի վերլուծությունների մեջ ներառի նաև դրամական հոսքերը՝ կապված ածանցյալների վերագնահատման հետ, ներառյալ կոնտրագենտների այն հավանական գործողությունների դեպքում, եթե վերջիններս պահանջեն լրացուցիչ գրավ այնպիսի իրավիճակներում, ինչպիսիք են բանկի վարկանիշի և/կամ վարկունակության անկումը կամ ածանցյալի հիմքում ընկած ակտիվի արժեզրկումը:

Երաշխավորություններ

Ակրեդիտիվներն ու ֆինանսական երաշխավորություններն իրենցից ներկայացնում են բանկի ֆինանսական միջոցների պոտենցիալ էական արտահոսքեր: Բանկը պետք է ունակ լինի ապահովել դրամական արտահոսքերի «նորմալ» մակարդակ իր գործունեության նորմալ պայմաններում, ինչպես նաև գնահատի այդ արտահոսքերի աճը ստրեսային իրավիճակներում: Օրինակ, ֆինանսական շուկայում սթրեսի ի հայտ գալը կարող է իր հետ բերել բանկի կողմից իր հաճախորդներին տրվող ակրեդիտիվների էական ավելացում:

Նույն կերպ, իրացվելիության խնդիրներ կարող են առաջանալ, երբ բանկը «հույսը դնի» ուրիշների կողմից իրեն տրամադրվող վարկային գծերի կամ երաշխավորությունների վրա: Օրինակ, բանկը, որն ունի այնպիսի ակտիվներ, որոնց վարկունակությունը կախված է երրորդ անձանց կողմից տրված երաշխավորություններից, կարող է ունենալ իրացվելիության պահանջներ այնպիսի դեպքերում, երբ երրորդ անձի ֆինանսական իրավիճակը բարձր աստիճանով կապված է պահվող ակտիվի վարկային որակների հետ: Այս պարագայում բանկի կողմից ակտիվի գծով երրորդ անձից ձեռք բերված ապահովվածության աստիճանը կարող է անկում ապրել հենց այն ժամանակ, երբ ակտիվը «վնասվի»:

Արժույթներ, որոնցով բանկը գործունեություն է ծավալում

Բանկը պետք է գնահատի իր համախառն արտարժույթային իրացվելիության պահանջարկը և կարողանա սահմանել արտարժույթային անհամապատասխանությունների ընդունելի մակարդակը (acceptable currency mismatches): Բանկը պետք է իրականացնի առանձին վերլուծություն այն արժույթներով իր քաղաքականության և ընթացակարգերի գծով, որոնցով ինքն իրականացնում է էական գործառնություններ՝ հաշվի առնելով պոտենցիալ սահմանափակումները ստրեսային իրավիճակների ժամանակ: Արտարժույթային անհամապատասխանությունների չափերը պետք է հաշվի առնեն.

ա. բանկի հնարավորությունները՝ ներգրավել համապատասխան արժույթով միջոցներ արտարժույթային շուկաներից,

բ. բանկի ունակությունը՝ փոխարկելու մեկ արժույթի գծով բանկում առկա ավելցուկը մեկ այլ արժույթի,

գ. այն արժույթների փոխարկելիությունը, որոնցով բանկն իրականացնում է իր գործառնությունները:

Բանկը պետք է գիտակցի և հնարավորություն ունենա կառավարել իր իրացվելիության ռիսկը, որն առաջանում է արտարժույթային ավանդների և վարկային գծերի միջոցով ազգային արժույթով ակտիվները ֆինանսավորելու, ինչպես նաև ազգային արժույթով արտարժույթային ակտիվները ֆինանսավորելու ժամանակ: Բանկը պետք է հաշվի առնի նաև արտարժույթի փոխարժեքի կամ շուկայի իրացվելիության կամ երկուսի միաժամանակ հանկարծակի փոփոխության հետ կապված ռիսկերը, որը կարող է կտրուկ մեծացնել արտարժույթային միջոցների միջև առկա անհամապատասխանությունները և փոխել արտարժույթի հեջավորման գործարքների արդյունավետությունը:

Թրթակցային, պահառուական և հաշվարկային գործառնություններ

Բանկը պետք է հասկանա և հնարավորություն ունենա կառավարել, թե ինչպես են իր թրթակցային, պահառուական և հաշվարկային գործառնություններն ազդում իր դրամական հոսքերի վրա: Հաշվի առնելով, որ հաճախորդների կողմից վճարումների շարժի ընդհանուր ծավալը կարող է լինել շատ մեծ, այդ շարժերի չնախատեսված փոփոխությունները կարող են բերել բանկի ավանդների և/կամ վարկային գծերի էական կրճատումների, ինչը կարող է ազդել գործընկեր կամ պահառու հանդիսացող բանկի ընդհանուր իրացվելիության մակարդակի վրա:

Չափման գործիքներ

Բանկը պետք է կիրառի մի շարք չափման գործիքներ և հաշվարկման եղանակներ, քանի որ գոյություն չունի մեկ միասնական չափման եղանակ, որով հնարավոր լինի գնահատել բանկի իրացվելիության ռիսկը: Կիրառելու համար իրացվելիության ռիսկի նկատմամբ «առաջ նայող» (forward-looking) մոտեցում, բանկը պետք է օգտագործի տարատեսակ հաշվարկներ գնահատելու համար իր հաշվեկշռի կառուցվածքը, ինչպես նաև ծրագրելու իր դրամական հոսքերն ու ապագա իրացվելիության դիրքերը՝ հաշվի առնելով արտահաշվեկշռային ռիսկերը: Այս հաշվարկները պետք է իրականացվեն ինչպես գործունեության նորմալ պայմանների, այնպես էլ ստրեսային իրավիճակների համար ըստ տարբեր ժամանակային հորիզոնների:

Վերլուծությունը պետք է լինի «առաջ նայող» և ուղղված լինի բացահայտելու ապագա ֆինանսական անհամապատասխանությունները, որպեսզի բանկը կարողանա գնահատել այդ անհամապատասխանությունները և բացահայտի իրացվելիության այնպիսի աղբյուրներ, որոնց միջոցով հնարավորություն կունենա զսպել հնարավոր ռիսկերը: Ֆինանսավորման աղբյուրների և ծախսման ուղղությունների չափման և վերլուծության ժամանակ բանկը պետք է նախագծի իր դրամական հոսքերը մի շարք այլընտրանքային սցենարների կտրվածքով: Այս նախագծերը իրենցից ներկայացնում են իրացվելիության ճեղքվածքի վերլուծություն, որոնք հիմնված են ակտիվների, պարտավորությունների և արտահաշվեկշռային

հողվածների ապագա պահվածքի վրա և կարող են օգտագործվել ապագայում ֆինանսավորման հնարավոր ավելցուկների կամ պակասուրդների գնահատման ժամանակ:

Ապագա դրամական հոսքերի նախագծման ժամանակ բանկի կողմից իրականացվող ենթադրությունների և կանխատեսումների մեծ դերի հետ կապված՝ բանկը պետք է քայլեր ձեռնարկի, որպեսզի համոզվի, որ իր կողմից կատարված ենթադրությունները հիմնավորված և փաստաթղթավորված են, ինչպես նաև պարբերաբար ենթարկվում են վերանայումների: Ժամկետային ավանդների և այլ ակտիվների, պարտավորությունների և անորոշ դրամական հոսքեր ունեցող արտահաշվեկշռային հողվածների ժամկետայնությունների, ինչպես նաև իրացվելիության ստրեսների ժամանակ ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների հասանելիության վերաբերյալ ենթադրություններն ունեն առանձնահատուկ կարևորություն:

Իրացվելիության ռիսկի հսկողությունը սահմանաչափերի միջոցով

Բանկը պետք է սահմանի տարբեր սահմանաչափեր իրացվելիության ռիսկին իր ենթարկվածությունը և խոցելիությունը հսկելու նպատակով: Բանկը պետք է պարբերաբար վերանայի իր կողմից սահմանված սահմանաչափերը: Սահմանաչափերը պետք է համապատասխանեն բանկի կողմից իրականացվող գործառնություններին ըստ աշխարհագրական տեղաբաշխվածության, ծառայությունների բնույթի, արժույթի և շուկաների:

Սահմանաչափերը պետք է օգտագործվեն՝ կառավարելու համար բանկի առօրյա իրացվելիությունը ըստ գործառնությունների և ստորաբաժանումների՝ նորմալ պայմաններում: Օրինակ, սահմանաչափի ամենապարզ տարատեսակը կարող է սահմանափակել բանկի դրամական հոսքերի անհամապատասխանությունների մեծությունը ըստ տարբեր ժամանակային հորիզոնների:

Սահմանաչափերը պետք է նաև ներառեն հաշվարկներ՝ ապահովելու համար, որ բանկը կարող է շարունակել իր գործունեությունը շուկայական ստրեսների, բանկին հատուկ ստրեսների և/կամ այդ երկուսի համատեղ հանդես գալու ժամանակ: Ավելի պարզ ասած, այսպիսի հաշվարկների նպատակն այն է, որպեսզի բանկը համոզվի, որ ստրեսային իրավիճակներում բանկի մոտ հասանելի իրացվելիությունը գերազանցում է բանկի իրացվելիության պահանջարկը: Սա քննարկվում է նաև ՍԿԶԲՈՒՆ-Բ 12-ում:

Կանխանշող ինդիկատորներ

Բանկը պետք է սահմանի այնպիսի ինդիկատորների շարք, որոնք թույլ կտան բացահայտել բանկի իրացվելիության ռիսկի կամ բանկի՝ իրացվելիության ռիսկի նկատմամբ խոցելիության աճը: Այսպիսի կանխանշող ինդիկատորները պետք է բացահայտեն ցանկացած բացասական տրենդ և պահանջեն համապատասխան գնահատումներ և բանկի տնօրինության կողմից պոտենցիալ արձագանք՝ զսպելու համար բանկի ենթարկվածությունը հնարավոր աճող ռիսկերին:

Կանխանշող ինդիկատորները իրենց բնույթով կարող են լինել քանակական և որակական: Դրանցից են.

- ակտիվների կտրուկ աճը, առավել ևս եթե դրանք ֆինանսավորվում են փոփոխական, տատանվող պարտավորությունների միջոցով,
- աճող կենտրոնացումները ակտիվներում կամ պարտավորություններում,
- արտարժույթային անհամապատասխանությունների աճը,
- պարտավորությունների կշռված միջին ժամկետայնության նվազումը,
- տարբեր արտարժույթային դիրքերի մոտեցումը ներքին կամ կարգավորիչ սահմանաչափերին,
- բանկի շահույթի, ակտիվների որակի կամ ընդհանուր ֆինանսական պայմանների վատթարացումը,
- բացասական համբավը,
- վարկանիշի անկումը,
- բաժնետոմսերի գնի անկումը կամ պարտքի ծախսերի բարձրացումը,
- բանկի գործընկերների կողմից բանկին տրամադրվող վարկերի կամ փոխառությունների դիմաց լրացուցիչ գրավի պահանջը կամ բանկի հետ նոր գործարքներ կնքելուց հրաժարվելը,
- թղթակից բանկերի կողմից վարկային գծերի կրճատումը կամ վերացումը,
- ավանդների արտահոսքի աճը,
- երկարաժամկետ ֆինանսավորման հասանելիության դժվարությունները,
- և այլն:

Մոնիթորինգի համակարգ

Բանկը պետք է ունենան հուսալի ղեկավարման տեղեկատվական համակարգ (management information system, MIS), որը տնօրենների խորհրդին, բանկի տնօրինությանը և համապատասխան անձնակազմին ճիշտ ժամանակին կտրամադրի «առաջ նայող» տեղեկատվություն բանկի իրացվելիության դիրքի վերաբերյալ: MIS-ը պետք է հնարավորություն ունենա հաշվարկել բանկի իրացվելիության դիրքերը բոլոր էական արժույթների գծով բոլոր ստորաբաժանումների և ագրեգացված կտրվածքով: MIS-ը պետք է օգտագործվի բանկի ամենօրյա իրացվելիության ռիսկի կառավարման պրոցեսում՝ հետևելու համար վերջինիս համապատասխանությանը բանկի կողմից մշակված քաղաքականություններին ընթացակարգերին և սահմանաչափերին:

Ռիսկի հաշվարկների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը պետք է իրականացվի պարբերաբար և պետք է համեմատի բանկի ընթացիկ իրացվելիությունը հաստատված սահմանաչափերի հետ, որպեսզի հնարավորություն ստեղծվի բացահայտել ցանկացած հնարավոր ճնշումները բանկի իրացվելիության վրա: Իրացվելիության ռիսկի սահմանաչափերի խախտումները պետք է անմիջապես ներկայացվեն, և պետք է մշակվեն հաշվետվությունների ներկայացման ուղեցույցներ ավելի բարձր մակարդակներին տեղեկությունների տրամադրման վերաբերյալ:

ՄԿԶԲՈՒՆՔ 8. Բանկը պետք է ակտիվորեն մոնիթորինգի ենթարկի և հսկի իրացվելիության ռիսկի ենթարկվածությունը և ֆինանսավորման նկատմամբ իր պահանջները ըստ տարբեր ստորաբաժանումների, գործառնությունների և արժույթների՝ հաշվի առնելով իրավական, կարգավորիչ և գործառնական սահմանափակումները իրացվելիության փոխանցելիության նկատմամբ:

Անկախ իր կազմակերպական կառուցվածքից և իրացվելիության ռիսկի կառավարման կենտրոնացվածության կամ ապակենտրոնացվածության աստիճանից, բանկը պետք է ակտիվորեն մոնիթորինգի ենթարկի և հսկի իր իրացվելիության ռիսկը առանձին իրավաբանական անձի, արտասահմանյան մասնաճյուղերի և դուստր ընկերությունների, ինչպես նաև խմբի, որպես մեկ միասնական օրգանիզմի, մակարդակով՝ ներդնելով այնպիսի ընթացակարգեր, որոնց համախմբում են տեղեկատվությունը ընդհանուր խմբի մակարդակով իրացվելիության ռիսկի նկատմամբ բանկի ենթարկվածությունը ներկայացնելու նպատակով, ինչպես նաև բացահայտում են խմբի ներսում իրացվելիության փոխանցման տարատեսակ սահմանափակումները:

Յուրաքանչյուր երկրի համար, որտեղ բանկը գործունեություն է իրականացնում, բանկը պետք է ունենա ընթացակարգեր, որոնք թույլ կտան իրականացնել իրացվելիության և գրավի առարկաների վերաբաշխումներ այն ստորաբաժանումների միջև, որոնք ունեն դրանց կարիքը՝ այն չափով, որքանով այդ փոխանցելիությունը թույլատրվում է: Բանկը պետք է հաշվի առնի նաև այն հավանականությունը, որ որևէ տեղային իրադարձություն կարող է իրացվելիության ճնշումներ առաջացնի ամբողջ խմբի համար օրինակ հեղինակության անկման դեպքում (երբ, օրինակ, շուկայի մասնակիցները կարծեն, որ մեկ ստորաբաժանումում տեղ գտած խնդիրները կարող են խնդիր առաջացնել ամբողջ խմբում): Խումբը, որպես մեկ միասնություն, և առանձին տարածքային ստորաբաժանումները պետք է կայուն լինեն այդպիսի շոկերի նկատմամբ այն չափով, որքանով դա նախատեսված է բանկի խորհրդի կողմից ընդունված ռիսկի ախորժակով:

Միջկազմակերպական ֆինանսավորման ուղիները (cross-entity funding channels) այնպիսի մեխանիզմ են, որոնց միջոցով իրացվելիությունը կարող է փոխանցվել և/կամ վերաբաշխվել խմբի ներսում: Օրինակ, մի ընկերությունը, որը ֆինանսավորում է տրամադրում խմբի անդամ հանդիսացող մեկ այլ ընկերության, կարող է այլևս ունակ չլինել դա անելու, երբ ինքը ևս ունենա իրացվելիության սահմանափակումներ կամ էլ մյուս ընկերությունը կարիք ունենա շատ մեծ ֆինանսավորման: Քանի որ միջկազմակերպական ֆինանսավորման ուղիները կարող են օգնել դուրս բերել իրացվելիությունը մեկ կազմակերպության կամ ստորաբաժանման մոտից, բանկը պետք է ներդնի ներխմբային իրացվելիության ռիսկի ներքին սահմանափակումների համակարգ՝ զսպելու համար շղթայական ռիսկը ստրեսային իրավիճակներում: Բանկը կարող է ներդնել նաև սահմանափակումներ դուստր ընկերությունների և/կամ մասնաճյուղերի մակարդակով ֆինանսավորման տեղափոխման վրա: Ներքին սահմանափակումներ կարող են դրվել նաև բանկի կողմից օգտագործվող յուրաքանչյուր արժույթի վրա:

Համբավի շղթայական ռիսկի զսպման նպատակով կարևորվում է իրացվելիության խնդիրների առաջացման ժամանակ բանկի կողմից արդյունավետ հաղորդակցումը բանկի գործընկերների, վարկանշային գործակալությունների և այլ պարտատերերի հետ: Բացի այդ, խմբի մակարդակով արտակարգ իրավիճակներում ֆինանսավորման պլանի, ինչպես նաև ֆինանսավորման տարբեր աղբյուրների կիրառման մեխանիզմները կարող են զսպել բանկի համբավի շղթայական ռիսկը:

Շուկայի առանձնահատուկ բնութագրերը և արտարժույթային դիրքերի գծով իրացվելիության ռիսկը պետք է հաշվի առնվի առավել ևս այնպիսի դեպքերում, երբ բացակայում է զարգացած արտարժույթային շուկան: Այն արժույթների համար, որոնք գնվում և վաճառվում են լավ զարգացած արտարժույթային շուկաներում, արտարժույթային ռիսկի կառավարման ավելի գլոբալ մոտեցումներ կարող են կիրառվել, այդ թվում՝ արտարժույթային սվոփերի օգտագործումը: Այնուամենայնիվ, բանկը պետք է գնահատի այն ռիսկը, որ արտարժույթային սվոփերի կնքումը կարող է էականորեն դժվարանալ ստրեսային իրավիճակներում:

Ֆինանսական միջոցների և գրավի փոխանցելիության վերաբերյալ բանկի կողմից իրականացված ենթադրությունները պետք է լինեն թափանցիկ, արտացոլվեն բանկի իրացվելիության ռիսկի կառավարման պլաններում և հասանելի լինեն վերահսկողական ուսումնասիրությունների համար: Բանկի ենթադրությունները պետք է ամբողջությամբ հաշվի առնեն իրացվելիության և գրավի առարկաների շարժի վրա առկա կարգավորիչ, իրավական, հաշվապահական, վարկային, հարկային և ներքին սահմանափակումները: Ենթադրությունները պետք է նաև հաշվի առնեն գործառնական միջոցառումները, որոնք անհրաժեշտ են միջոցները և գրավի առարկաները ստորաբաժանումների միջև տեղափոխելու համար, ինչպես նաև այն ժամանակը, որը պահանջվում է իրականացնելու համար այդ տեղափոխումները նշված միջոցառումների ներքո:

ՄԿՁԲՈՒՆՔ 9. Բանկը պետք է վերլուծի իր իրացվելիությունը՝ օգտագործելով տարբեր «խսկ ի՞նչ, եթե...» սցենարներ:

Բանկի գնահատականը՝ կապված նրա բավարար չափով իրացվելի լինելու հետ, էապես կախված է տարբեր սցենարների դեպքում նրա դրամական հոսքերի պահվածքից: Իրացվելիության վերլուծությունն այսպիսով կապվում է տարբեր «խսկ ի՞նչ, եթե...» սցենարների կիրառման հետ: Յուրաքանչյուր սցենարի դեպքում բանկը պետք է փորձի հաշվարկել բոլոր հնարավոր էական դրական կամ բացասական իրացվելիության տատանումները: Այս սցենարները պետք է հաշվի առնեն և՛ ներքին (բանկին հատուկ), և՛ արտաքին (շուկայի հետ կապված) գործոնները: Չնայած իրացվելիությունը կառավարվում է շուկայի «նորմալ» պայմաններում, այդուհանդերձ բանկը պետք է պատրաստ լինի իրացվելիության կառավարմանը «ոչ նորմալ» պայմաններում ևս:

Բանկը պետք է իր յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության համար սահմանի դրամական հոսքերի ժամկետներ՝ գնահատելով տվյալ սցենարի դեպքում նշված դրամական հոսքերի շարժերի հավանականությունները: Դրամական հոսքերի ժամկետայնությունների և ծավալների վերաբերյալ որոշումները պետք է հանդիսանան

յուրաքանչյուր սցենարի դեպքում ժամկետայնության աղյուսակի կառուցման պարտադիր պայման:

Ժամկետայնության աղյուսակը կազմելիս դրամական ներհոսքերի և արտահոսքերի ժամկետայնությունների որոշումը կարող է տարբերվել մի սցենարից մյուսը, և ենթադրությունները կարող են էականորեն տարբեր լինել: Օրինակ, բանկը, հիմնվելով իր նախկին փորձի վրա, կարող է ենթադրել, որ բանկին հատուկ ֆինանսավորման ճգնաժամի պայմաններում իր՝ ակտիվների ապագա դրամական հոսքերի մակարդակը և ժամկետայնությունը վերահսկելու ունակությունը շատ չի վատթարանա՝ համեմատած նորմալ պայմանների հետ: Այնուամենայնիվ, ընդհանուր շուկայում առաջացող ճգնաժամի պայմաններում բանկի այդ ունակությունը կարող է էականորեն նվազել, եթե մի քանի կազմակերպություններ ցանկանան կամ կարողանան իրականացնել քիչ իրացվելի ակտիվների կանխիկ առք: Մյուս կողմից, շուկայում բարձր հեղինակություն վայելող բանկը կարող է շահել տվյալ դեպքում, քանի որ պոտենցիալ ավանդատուները փնտրում են առավելագույնս վստահելի վայր իրենց միջոցների համար: Հետևաբար, գնահատումներ իրականացնելիս բանկերը պետք է ոչ միայն հաշվի առնեն իրենց սեփական անցյալի փորձը, այլև իրացվելիության ճգնաժամի պայմաններում այլ բանկերի փորձերը:

ՄԿՁԲՈՒՆՔ 10. Բանկը պետք է պարբերաբար վերանայի իրացվելիության կառավարման ժամանակ օգտագործվող իր ենթադրությունները՝ ճշտելու համար դրանց հիմնավորվածությունը:

Քանի որ բանկի ապագա իրացվելիության դիրքերը կարող են կրել այնպիսի գործոնների ազդեցություն, որոնք չեն կարող մշտապես ճշգրտորեն կանխատեսվել, բանկի կողմից կատարվող ենթադրությունները պետք է պարբերաբար վերանայվեն, որպեսզի պարզվի դրանց հիմնավորվածության շարունակականությունը, մասնավորապես՝ շուկայում տեղի ունեցող կտրուկ փոփոխությունների պայմաններում: Բանկի կողմից կատարվող ենթադրությունների քանակը պետք է լինի սահմանափակ: Ենթադրությունները պետք է կատարվեն հետևյալ 4 ուղղություններով.

1. ակտիվներ,
2. պարտավորություններ,
3. արտահաշվեկշռային հոդվածներ,
4. այլ:

1. Ակտիվներ

Բանկի ապագա ակտիվների վերաբերյալ կանխատեսումները ներառում են դրանց պոտենցիալ յուրացվելիությունը և օգտագործման հնարավորությունը որպես գրավ (ինչը կարող է ավելացնել դրամական ներհոսքերը), նոր ակտիվների առաջացման հնարավորությունները:

Բանկի պոտենցիալ ակտիվների ծավալի որոշումը ենթադրում է հետևյալ 3 հարցերին պատասխանելը.

- բանկի ակտիվների ո՞ր մասն է բանկը ունակ և պատրաստ վերաֆինանսավորել,

- ինչպիսի՞ն է կանխատեսվող պահանջվող նոր վարկերի մակարդակը, որը կարող է հաստատվել բանկի կողմից,

- ինչպիսի՞ն է պոտենցիալ պահանջվող ֆինանսական ծավալների կանխատեսվող մակարդակը, որը բանկը պետք է ֆինանսավորի (օրինակ՝ վարկային գծեր):

Իր ֆինանսական պահանջմունքները գնահատելու ժամանակ, բանկերը կարող են օգտագործել իրենց պատմական շարքերը և նոր վարկերի կանխատեսվող պահանջվող մեծությունները, իրականացնել վիճակագրական վերլուծություններ՝ հաշվի առնելով վարկերի նկատմամբ պահանջների վրա ազդող սեզոնայնության և այլ գործոնները:

Ակտիվների տարբեր տեսակների համար երկրորդային շուկաների ընդլայնումը մեծացրել է բանկերի հնարավորությունները՝ վաճառել իրենց ակտիվները ավելի արագ: Նորմալ շուկայական պայմաններում այս ակտիվները կարող են արագորեն և հեշտությամբ վերափոխվել կանխիկի, և շատ բանկեր այս ակտիվները ներառում են ֆինանսավորման հասանելի աղբյուրների վերլուծություններում: Այնուամենայնիվ, վերջին միջազգային զարգացումները ցույց տվեցին, որ ակտիվների վաճառքը ոչ միշտ կարող է լինել ֆինանսավորման ասպահով աղբյուր:

Ակտիվների յուրացվելիությունը որոշելիս, դրանք կարող են բաժանվել չորս խմբի՝ կախված իրենց հարաբերական իրացվելիության մակարդակից.

- առավել իրացվելի ակտիվների խումբ, որը ներառում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են կանխիկ դրամը, պետական արժեթղթերը, որոնք կարող են օգտագործվել որպես գրավ Կենտրոնական բանկի հետ իրականացվող բաց շուկայական գործառնություններում,
- երկրորդ խումբ, որը ներառում է այլ յուրացվելի արժեթղթերը, միջբանկային վարկերը, որոնք յուրացվելի են, սակայն որոշակի պայմաններում կարող են կորցնել իրենց իրացվելիության որոշակի աստիճանը,
- ավելի քիչ իրացվելի խումբը ներառում է բանկերի վարկային պորտֆելը: Այստեղ պետք է ենթադրություններ կատարել այն ժամկետների վերաբերյալ, որոնց ընթացքում բանկի ակտիվները կարող են վաճառվել: Որոշ ակտիվներ, չնայած յուրացվելի լինելու հանգամանքին, կարող են համարվել ոչ իրացվելի վերլուծության մեջ կիրառվող կոնկրետ ժամկետների պարագայում,
- առավել անիրացվելի ակտիվների խումբ, որը ներառում է հիմնականում ոչ յուրացվելի ակտիվները, ինչպիսիք են օրինակ վաճառքի համար ոչ պիտանի վարկերը, բանկերի շենքերն ու շինությունները, ներդրումները դուստր ընկերություններում և այլն:

Այստեղ պետք է նկատի ունենալ, որ տարբեր բանկեր կարող են նույն ակտիվը ներառել իրացվելիության աղյուսակի տարբեր խմբերում իրենց ակտիվների և պարտավորությունների ներքին կառավարման համակարգում գոյություն ունեցող տարբերությունների պատճառով: Օրինակ, վարկը, որը մի բանկի կողմից դասակարգվել է որպես միջին իրացվելի ակտիվ, կարող է գնահատվել որպես արագ իրացվելի մեկ այլ բանկի կողմից:

Ակտիվների խումբը որոշելիս բանկը պետք է նաև որոշի, թե ինչպիսի փոփոխություններ կկրի ակտիվի իրացվելիությունը տարբեր սցենարների դեպքում: Որոշ ակտիվներ, որոնք իրացվելի են նորմալ շուկայի պայմաններում, կարող են դրսևորել այլ իրացվելիություն շուկայում տատանումների դեպքում: Իրացվելիության այս անհամաչափությունը գնալով ավելի ակնառու է դառնում՝ կապված վարկային ռիսկի գործիքների շուկաների ընդլայնման հետ:

2. Պարտավորություններ

Բանկի ֆինանսավորման աղբյուրները պարզելու նպատակով դրա հաշվեկշռի պարտավորությունների մասի վերլուծությունը պահանջում է բանկերից, որպեսզի վերջիններս կարողանան հասկանալ իրենց ֆինանսավորում տրամադրողների և ֆինանսավորման գործիքների բնույթը: Բանկի պարտավորություններից ծագող դրամական հոսքերը գնահատելու համար բանկը նախ պետք է վերլուծի իր պարտավորությունների «պահվածքը» նորմալ գործունեության պայմաններում: Սա ներառում է.

- ավանդների և այլ պարտավորությունների արտահոսքի նորմալ մակարդակ,
- պայմանագրով մարման ժամկետ չունեցող պարտավորությունների արդյունավետ ժամկետայնություն (effective maturity), ինչպիսիք են, օրինակ, ցպահանջ ավանդները և տարատեսակ խնայողական հաշիվները,
- ավանդների աճը նորմալ պայմաններում:

Ինչպես և ակտիվները գնահատելու ժամանակ, բանկը կարող է օգտագործել տարբեր հնարավոր տեխնիկաներ (օրինակ՝ ավանդների «պահվածքի» պատմական շարքեր) իր պարտավորությունների արդյունավետ ժամկետայնությունը գնահատելու համար: Ավանդների վերլուծության համար բանկը պետք է իրականացնի վիճակագրական հետազոտություն, որը հաշվի կառնի սեզոնայնության գործոնը, տոկոսադրույքի զգայունությունը և այլ մակրոտնտեսական գործոններ: Որոշ առավել խոշորածավալ ավանդների համար բանկը կարող է իրականացնել ավանդի դուրսբերման հավանականության վերլուծություն՝ ըստ առանձին հաճախորդների (ավանդատուների):

Շուկայի ոչ նորմալ պայմաններում բանկերի պարտավորություններից առաջացող դրամական հոսքերը վերլուծելիս բանկը պետք է ուշադրություն դարձնի հետևյալ չորս հարցերի վրա.

- ֆինանսավորման ո՞ր աղբյուրները հավանաբար կարող են մնալ բանկում և/կամ ընդլայնվեն հնարավորության դեպքում,
- ֆինանսավորման ո՞ր աղբյուրները հավանաբար կփակվեն բանկի համար և ի՞նչ աստիճանով: Արդյո՞ք ավանդների տոկոսադրույքների փոփոխությունները կարող են էական ազդեցություն ունենալ աղբյուրների փակմանը խոչընդոտելու վրա:
- ո՞ր ժամկետային կամ անժամկետ պարտավորությունները կարող են դուրս գալ բանկից առաջին իսկ խնդիրների առաջացման դեպքում:
- արդյո՞ք բանկն ունի որոշակի երկրորդային պահուստային հնարավորություններ (back-up facilities), որը նա կարող է օգտագործել, և ի՞նչ պայմաններում:

3. Արտահաշվեկշռային հողվածներ

Բանկը պետք է նաև վերլուծություններ իրականացնի՝ կապված իր արտահաշվեկշռային գործառնություններից առաջացող դրամական հոսքերի հետ: Ստրեսային իրավիճակներում արտահաշվեկշռային պարտավորությունները կարող են էական ազդեցություն ունենալ բանկի իրացվելիության վրա:

Պայմանական պարտավորությունները, ինչպիսիք են ակրեդիտիվները և ֆինանսական երաշխիքները, կարող են էապես ազդել բանկի ֆինանսական միջոցների վրա, սակայն հիմնականում դրանց կիրառությունը անկախ է բանկի գործունեությունից: Բանկը կարող է որոշակի հետազոտություններ իրականացնել հնարավոր դրամական արտահոսքերի վերաբերյալ բանկի նորմալ գործունեության պայմաններում և կատարել կանխատեսումներ դրանց հնարավոր փոփոխությունների վերաբերյալ ստրեսային իրավիճակներում: Այնուամենայնիվ, շուկայում տեղի ունեցող ստրեսային իրավիճակները կարող են ավելացնել ակրեդիտիվների և երաշխավորությունների ի հայտ գալու դեպքերը շուկայում դեֆոլտների և սնանկությունների ավելացման պատճառով:

4. Այլ

Բանկի կողմից օգտագործվող գործիքները առանձին-առանձին դիտարկելը կարող է անտեսել որոշ գործոններ, որոնք կարող են էապես ազդել բանկի դրամական հոսքերի վրա: Բացի բանկի սեփական գործառնություններն իրականացնելու համար պահանջվող իրացվելիությունից, բանկին նաև պահանջվում են միջոցներ իր այլ գործառնությունները ֆինանսավորելու նպատակով: Օրինակ, բազմաթիվ բանկեր կարող են մատուցել հաշվարկային բանկային ծառայություններ արտասահմանյան բանկերին: Այդպիսի դեպքերում բանկերը պետք է խնդրեն իրենց հաճախորդներին կանխատեսել իրենց վճարումների ծավալներն այնպես, որ բանկն ինքը հնարավորություն ունենա պլանավորել իր ընդհանուր իրացվելիության պահանջները, չնայած բոլոր դեպքերում անորոշության որոշակի աստիճանը մնում է բանկի մոտ:

RTGS (real-time gross settlement) վճարային համակարգերի դեպքում բանկի հաճախորդների կողմից իրականացվող վճարումների անսպասելի տատանումները կարող են պահանջել բանկից՝ ներգրավել լրացուցիչ կարճաժամկետ միջոցներ՝

վճարումներն իրականացնելու համար: Շատ երկրներում կենտրոնական բանկերը պատրաստակամություն են հայտնում տրամադրվել նշված միջոցները բանկերին՝ դրա դիմաց՝ սակայն պահանջելով որոշակի պահանջներին բավարարող գրավ: Այս իսկ պատճառով բանկերը կարիք ունեն իրենց մոտ պահել որոշակի արժեթղթեր, կենտրոնական բանկում գրավ դնելու կամ կենտրոնական բանկի հետ ռեպո գործառնություն կնքելու նպատակով:

Այն դեպքերում, երբ բանկի հաճախորդները չեն կարողանում կանխատեսել իրենց կողմից կատարվող փոխանցումների ծավալները, վճարում կատարող բանկը կարող է օրվա վերջում ունենալ անսպասելի և չկանխատեսված դիրքեր և անհրաժեշտություն զգա ներգրավելու օվերնայթ միջոցներ: Այս դեպքում նույնպես, միջոցները կենտրոնական բանկից ներգրավելու դեպքում կարող է պահանջվել որոշակի գրավ բանկի կողմից:

Բացի այդ, այնպիսի ծախսեր, ինչպիսիք են վարձավճարները, աշխատավարձերը և հարկային վճարումները, չնայած ոչ էական չափով, այնուամենայնիվ կարող են իրենց ազդեցությունն ունենալ բանկի դրամական արտահոսքերի վրա:

ՄԿԶԲՈՒՆՔ 11. Բանկը պետք է ստեղծի ֆինանսավորման քաղաքականություն, որն ապահովում է ֆինանսավորման աղբյուրների արդյունավետ դիվերսիֆիկացիա: Այն պետք է պահպանի շարունակական ներկայությունը իր ընտրած ֆինանսավորման շուկաներում և ամուր հարաբերությունները դրամական միջոցների մատակարարողների հետ՝ նպաստելու համար ֆինանսավորման աղբյուրների արդյունավետ դիվերսիֆիկացմանը: Բանկը պետք է պարբերաբար չափի, գնահատի իր կարողությունը՝ յուրաքանչյուր աղբյուրից ֆինանսավորման արագ ներգրավման հնարավորություններն համար: Այն պետք է նույնականացնի այն հիմնական գործոնները, որոնք ազդում են միջոցներ ներգրավելու իր կարողության վրա և սերտորեն վերահսկի այդ գործոնները՝ վստահ լինելու համար, որ դրամական միջոցների հավաքագրելու կարողության գնահատականները մնում են ուժի մեջ:

Բանկը պետք է դիվերսիֆիկացնի ֆինանսավորման հասանելի աղբյուրները կարճ, միջին և երկար ժամկետներում: Դիվերսիֆիկացիայի թիրախները պետք է լինեն միջնաժամկետ և երկարաժամկետ ֆինանսավորման ծրագրերի մի մասը և պետք է համահունչ լինեն բյուջեի և բիզնեսի պլանավորման գործընթացին: Ֆինանսավորման պլանները պետք է հաշվի առնեն ֆինանսավորման աղբյուրների և շուկայական պայմանների միջև փոխհարաբերությունները: Ցանկալի դիվերսիֆիկացիան պետք է ներառի նաև գործընկերոջ կողմից սահմանափակումները, գործիքի տեսակը, արժույթը և աշխարհագրական շուկան:

Որպես ընդհանուր իրացվելիության կառավարման փորձ՝ բանկերը պետք է սահմանափակեն համակենտրոնացումը որևէ որոշակի ֆինանսավորման աղբյուրի կամ ուղղության վրա: Որոշ բանկեր ավելի ու ավելի են ապավինում մեծածավալ ֆինանսավորմանը, ինչը հակված է լինել ավելի անկայուն, քան փոքրածավալ ֆինանսավորումը: Հետևաբար, այս բանկերը պետք է երաշխավորեն մեծածավալ ֆինանսավորման աղբյուրների բավականաչափ բազմազան լինելը՝ պահպանելու

Ֆինանսների ժամանակային հասանելիությունը ճիշտ ժամկետներում և ողջամիտ ծախսերով:

Ավելին՝ մեծածավալ ֆինանսավորմանն ապավինող բանկերը պետք է ունենան բարձր իրացվելի ակտիվների՝ համեմատաբար ավելի բարձր տեսակարար կշիռ, քան բանկերը, որոնք հիմնվում են հիմնականում փոքրածավալ ֆինանսավորման վրա: Բազմաթիվ արժույթներով գործարքներ իրականացնող բանկերի համար յուրաքանչյուր արժույթով իրացվելիության տարբեր աղբյուրների մատչելիությունը պարտադիր է, քանի որ բանկերը միշտ չէ, որ կարող են իրացվելիությունը հեշտությամբ փոխել մեկ արժույթից մյուսը:

Բանկի տնօրինությունը պետք է տեղյակ լինի բանկի ակտիվների և ֆինանսավորման աղբյուրների կազմին, հատկություններին և դիվերսիֆիկացիային: Բանկի տնօրինությունը պետք է կանոնավոր կերպով վերանայի ֆինանսավորման քաղաքականությունները ներքին և արտաքին միջավայրերում յուրաքանչյուր փոփոխության լույսի ներքո՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխությունների առաջարկով հանդես գալով բանկի խորհրդում:

Շուկայի հասանելիության կառավարումը

Ֆինանսավորման բազմազանության երաշխավորման էական բաղադրիչներից է շուկա մուտք գործելու ապահովումը: Շուկայի մատչելիությունը կարևոր է արդյունավետ իրացվելիության ռիսկերի կառավարման տեսանկյունից, քանի որ այն ազդում է և՛ ֆինանսներն ընդլայնելու հնարավորության, և՛ ակտիվները իրացնելու վրա: Բանկի տնօրինությունը պետք է վստահ լինի, որ շուկայի մատչելիությունը ակտիվորեն կառավարվում, հսկողության է ենթարկվում և ստուգվում համապատասխան անձնակազմի կողմից:

Շուկայի մատչելիության կառավարումը կարող է ընդգրկել նաև զարգացող շուկաները՝ ակտիվների վաճառքի և պայմանավորվածությունների ամրապնդման համար, ինչի ներքո բանկը կարող է փոխառություն ներգրավել ապահովված կամ անապահով հիմքով: Բանկն իր ֆինանսավորման քաղաքականությանն առնչվող շուկաներում պետք է պահպանի ակտիվ ներկայություն: Դրա համար պահանջվում է շարունակական նվիրվածություն և համապատասխան ու պատշաճ ենթակառուցվածքներում ներդրումներ, գործընթացներ, տեղեկատվության հավաքագրում: Բանկը չպետք է ենթադրի, որ այն կարող է մուտք գործել շուկա մի ժամանակահատվածի շրջանակներում, որի համար նա չի ստեղծել անհրաժեշտ համակարգերն ու փաստաթղթավորում, կամ եթե այդ պայմանավորվածությունները պարբերաբար չեն կիրառվել ու բանկը չի համոզվել, որ պատրաստակամ կողմերը տեղում են: Բոլոր դեպքերում բանկը պետք է ունենա լիարժեք գիտելիքներ պոտենցիալ ակտիվների վաճառքը կարգավորող իրավական դաշտի մասին և երաշխավորի փաստաթղթավորման վստահելիությունն ու իրավաբանական ուժը:

Ճնշման տակ հայտնվելու դեպքում՝ սովորաբար հուսալի ֆինանսավորման շուկաները կարող են լրջորեն խաթարվել: Բանկը պետք է հաշվի առնի շուկայի խափանումների և ազդեցությունը դրամական հոսքերի և կարճաժամկետ և երկարաժամկետ ֆինանսավորման շուկաների մատչելիության վրա: Մասնավորապես,

կարող են առաջանալ ստրեսներ, ինչի պատճառով բանկի ակտիվների մի մասը հնարավոր չլինի վաճառել կամ ֆինանսավորել մատչելի գներով:

Բանկը պետք է ճանաչի և հաստատի ամուր հարաբերություններ ընթացիկ, առկա և պոտենցիալ ներդրողների հետ: Բանկը պետք է հաստատի և պահպանի հարաբերություններ Կենտրոնական բանկի հետ:

Թեպետ ֆինանսավորողների հետ ուժեղ հարաբերությունների զարգացումն ու պահպանումը կարևոր է՝ բանկը պետք զգուշորեն հետևի այդ հարաբերությունների զարգացմանը ցնցումային ժամանակահատվածում:

Ինստիտուտները, որոնք նորմալ պայմաններում հուսալիորեն միջոցներ են ապահովում, կարող են նման կերպ չվարվել համատարած սթրեսի պայմաններում՝ իրենց սեփական իրացվելիության պահանջների նկատմամբ եղած անորոշության պատճառով: Սթրես-թեստերի սցենարների և արտակարգ իրավիճակներում ֆինանսավորման ծրագրերի մեջ բանկը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ ֆինանսավորման աղբյուրները կարող են սպառվել և շուկան փակվի:

Բացի այդ, բանկի՝ մարման հնարավորության նկատմամբ անորոշությունը կարող է հանգեցնել ֆինանսավորող կողմերի՝ ֆինանսավորում տրամադրելու պատրաստակամության վատթարացմանը: Նման իրավիճակներում բանկի կապիտալի որակն ու ուժը կարող են դրականորեն ազդել կողմերի պատրաստակամության վրա՝ պահպանելու ֆինանսավորման հարաբերությունները: Սթրես-թեստի սցենարները և արտակարգ իրավիճակներում ֆինանսավորման ծրագրերը պետք է հաշվի առնեն այն ազդեցությունը, որ կորուստներն ու կապիտալի նվազումը կարող են ունենալ բանկի՝ ֆինանսավորման հարաբերությունների պահպանման կարողության վրա:

Բանկը պետք է բացահայտի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրները, որոնք ամրապնդում են մի շարք խիստ հավանական, բանկին հատուկ և լայն շուկայական ցնցումներին դիմակայելու կարողությունը: Կախված իրացվելիության ցնցումների բնույթից, խստությունից և տևողությունից՝ ֆինանսավորման պոտենցիալ աղբյուրները ներառում են հետևյալը.

- ավանդի աճ,
- պարտավորությունների ժամկետայնության երկարաձգում,
- կարճաժամկետ և երկարաժամկետ պարտքային գործիքների նոր թողարկումներ,
- միջոցների ներխմբային փոխանցումներ, նոր կապիտալի գործիքների թողարկումներ, դուստր ընկերությունների վաճառք,
- ակտիվների արժեթղթավորում,
- բարձր իրացվելի ակտիվների վաճառք կամ ռեպո,
- փոխառություն Կենտրոնական բանկից կամ այլ ֆինանսական կազմակերպությունից:

Սակայն ոչ բոլոր տարբերակները կարող են առկա լինել բոլոր հանգամանքներում և մի քանիսը կարող են հասանելի լինել միայն ժամանակի զգալի ուշացումով: Բանկի տնօրինությունը պետք է պարբերաբար վերանայի և փորձարկի իր դրամական միջոցների ընդլայնման տարբերակները՝ գնահատելու կարճ, միջին և երկար ժամկետներում իրացվելիության ապահովման իրենց արդյունավետությունը:

ՄԿԶԲՈՒՆՔ 12. Բանկը պետք է ակտիվորեն տնօրինի իր իրացվելիության դիրքերն ու ռիսկերը, որպեսզի բավարարի վճարահաշվարկային պարտավորությունները ճիշտ ժամանակին՝ և՛ նորմալ, և՛ ստրեսային պայմաններում և աշդպիսով նպաստի վճարահաշվարկային համակարգի անխափան գործունեությանը:

Ամենօրյա իրացվելիության կառավարումը բանկի՝ իրացվելիության կառավարման ռազմավարության կարևոր բաղադրիչ է, և կարևոր է այդ ռազմավարության այլ երկարաժամկետ ասպեկտների իրականացման տեսանկյունից: Իրացվելիությունը արդյունավետ կառավարելու՝ բանկի ձախողումը թույլ չի տա նրան բավարարել իր վճարման պարտավորությունները նախատեսված ժամանակում՝ այդ կերպ ազդելով իր սեփական և այլ կողմերի իրացվելիության դիրքի վրա: Նախ, վարկային անհանգստությունների կամ ընդհանուր շուկայական ցնցումների պարագայում, կոնտրազենտները նախատեսված ժամանակին վճարումները կատարելու ձախողումները կարող են դիտարկել իբրև ֆինանսական թուլության նշան և իրենց հերթին մերժեն կամ հետաձգեն բանկի վճարումները՝ պատճառելով իրացվելիության լրացուցիչ ճնշումներ:

Երկրորդ, այն կարող է կոնտրազենտների մոտ առաջացնել ֆինանսական սղություն և խաթարել այդ կողմերի՝ վճարման պարտավորությունները բավարարելու ունակությունը և ընդհատել վճարահաշվարկային համակարգերի անխափան գործունեությունը: Հաշվի առնելով համակարգերի միջև գոյություն ունեցող փոխկախվածությունը՝ որոշ կարևոր վճարումներ իրականացնելու՝ բանկի ձախողումը կարող է հանգեցնել իրացվելիության խափանումների, որոնք արագ տարածվում են շատ համակարգերի և կառույցների շրջանում:

Եթե ռիսկերի վերահսկումը ծանրաբեռնված է, այդ խափանումները կարող են փոփոխել շատ բանկերի առօրյա կամ օվերնայթ ֆինանսավորման կարիքները, այդ թվում՝ Կենտրոնական բանկից նրանց վարկային պահանջները և ազդել դրամական շուկաների պայմանների վրա: Այլ՝ պակաս կարևոր վճարումների հետաձգումը ևս կարող է այլ կառույցներին ստիպել հետաձգել իրենց վճարումները:

Բանկը պետք է որդեգրի առօրյա իրացվելիության կառավարման նպատակներ, որոնք թույլ կտան.

ա) նույնականացնել և հերթագրել իրենց բոլոր պարտավորությունները, որպեսզի դրանք իրականացվեն նախատեսված ժամկետներում,

բ) կարգավորել այլ պակաս կարևոր պարտականությունները հնարավորինս շուտ:

Հետապնդելով այս նպատակները, սակայն, բանկը պետք է նաև հաշվի առնի իր իրացվելիության ռիսկերի փոփոխությունները, երբ վճարումներն ուղարկվում և

ստացվում են ու ողջ օրվա ընթացքում կնքվում են պայմանագրային պարտավորություններ:

Բանկն, իր ամենօրյա իրացվելիության դիրքերի կառավարման և նպատակների իրագործման ընթացքում կարող է բախվել մի շարք մարտահրավերների:

Որոշ դեպքերում բանկերի հաճախորդները կարող են հանդիպել նույնանման մարտահրավերների: Որպես հետևանք, բանկը կարող է դիմել օրական հիմունքներով դրամական միջոցների փոխառնման՝ տնօրինելու օրական իրացվելիության դիրքը և հասնելու օրական իրացվելիության կառավարման նպատակներին: Եթե օրական դեֆիցիտը դառնա շատ ավելի մեծ, քան ակնկալվում էր, հնարավոր է լինեն հանգամանքներ, որոնց բերմամբ բանկը հերթագրի իր արտահոսքերը՝ բավարարելու համար կարևոր վճարումները:

Այն դեպքում, երբ բանկը պարտքով օրական (intraday) վարկ է վերցրել, բայց չի ստանում դրամական ներհոսքեր, ինչպես ակնկալվում էր աշխատանքային օրվա ավարտից առաջ, այն ստիպված կլինի շուկայից կամ կենտրոնական բանկից փոխառնել լրացուցիչ օվերնայթ միջոցներ:

Բանկի օրական իրացվելիության կառավարումը պետք է ներառի հետևյալ 6 գործառնական տարրերը:

Նախևառաջ, բանկը պետք է ունենա ակնկալվող օրական համախառն իրացվելիության ներհոսքերի և արտահոսքերի չափման կարողություն, հնարավորության դեպքում կանխատեսի այս հոսքերի օրական ժամանակացույցը և կանխորոշի գուտ ֆինանսավորման հնարավոր դեֆիցիտների շրջանակը, որոնք կարող են առաջանալ օրվա ընթացքում: Հաշվի առնելով վերոհիշյալ մարտահրավերները՝ կարևոր է, որ բանկերը

- հասկանան բոլոր այն վճարահաշվարկային համակարգերի կանոնները, որոնցում իրենք ներգրավված են,
- նույնականացնեն հիմնական գործընկերներին և նրանց թղթակիցներին կամ պահառուներին,
- նույնականացնեն հիմնական ժամերը, օրերը և հանգամանքները, որոնց դեպքում իրացվելիության հոսքերը և հնարավոր օրական վարկային միջոցների կարիքները կարող են լինել հատկապես բարձր,
- հասկանան իրացվելիության հոսքերի ժամանակացույցի հիմքում ընկած բիզնես պահանջները, ներքին բիզնես գծերի, ուղղությունների, հիմնական հաճախորդների օրական վարկային կարիքները: Բանկը հիմնական հաճախորդներից՝ այդ թվում նաև հաճախորդ բանկերից պետք է ճշտի վճարումների ուղղությունը՝ հեշտացնելու համար գործընթացը:

Երկրորդ, բանկը սպասվելիք գործառնությունների և հասանելի ռեսուրսների (հաշվեկշիռներ, մնացած վարկային կարողություններ, հասանելի գրավ) հետ մեկտեղ պետք է ունենա իրացվելիության դիրքերի ստուգման հնարավորություն: Օրվա ընթացքում դիրքերի հաճախակի ստուգումը կարող է օգնել բանկին որոշել, երբ ձեռք բերել լրացուցիչ օրական իրացվելիություն կամ սահմանափակել իրացվելիության

արտահոսքերը՝ բավարարելու կատարվելիք վճարումները: Մոնիթորինգը բանկին կարող է օգնել նաև արդյունավետորեն բաշխել օրական իրացվելիությունը բանկի սեփական և հաճախորդ բանկերի և կազմակերպությունների կարիքների միջև: Այն բանկին կարող է նաև թույլ տալ արագ արձագանքել անսպասելի վճարման հոսքերին:

Երրորդ, բանկը պետք է պայմանավորվածություններ ունենա օրական բավարար միջոցներ ձեռք բերելու համար՝ բավարարելու իր ամենօրյա նպատակները: Թղթակից կամ պահառուի բանկերը երբեմն հաճախորդ բանկերին տրամադրում են օրական վարկ, և օրական դրամական միջոցները կարող են հասանելի լինել նաև այլ շուկայական աղբյուրներից (օրինակ, պայմանավորվածություն ձեռք բերել կոնկրետ ժամերին օվերնայթ դրամական շուկաների գործարքների իրականացման համար): Բանկի օրական միջոցների աղբյուրները կարող են տարբերվել ըստ արժույթների, հատկապես, եթե կենտրոնական բանկից օրական վարկի մատչելիությունը այդ բանկի համար սահմանափակ է:

Չորրորդ, բանկը պետք է ունենա գրավը կառավարելու և մոբիլիզացնելու հնարավորություն օրական դրամական միջոցներ ձեռք բերելու անհրաժեշտության դեպքում:

Բանկը պետք է ունենա բավարար չափով գրավ՝ հասնելու օրական նպատակների նվաճման համար անհրաժեշտ օրական իրացվելիության մակարդակին: Այն պետք է ունենա գործառնական կարգավորում՝ այս գրավը կենտրոնական բանկին, թղթակիցներին, պահառուներին և գործընկերներին առաքելու համար: Բանկը նաև պետք է տեղյակ լինի գրավի տարբեր ձևերը մոբիլիզացնելու համար պահանջվող ժամկետներին՝ ներառյալ միջսահմանային հիմունքներով հաստատված գրավի համախմբման համար անհրաժեշտ ժամկետները:

Հինգերորդ, բանկը պետք է ունենա հաստատուն ունակություն՝ կառավարելու իր իրացվելիության արտահոսքերի ժամկետները՝ օրվա նպատակներին համահունչ: Բիզնես ուղղություններով ներքին համակարգումը կարևոր է իրացվելիության արտահոսքերի նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելու տեսանկյունից:

Վերջապես, բանկը պետք է պատրաստ լինի գործ ունենալ իր օրական իրացվելիության հոսքերի անսպասելի խափանումների հետ: Բանկի սթրես-թեստերն ու արտակարգ իրավիճակներում ֆինանսավորման ծրագրերը պետք է արտացոլեն օրական նկատառումները:

Առողջ գործառնական ռիսկերի կառավարումը և գործարար գործընթացների անընդհատության կարգավորումը ևս կարևոր են բանկի օրական իրացվելիության տնօրինման արդյունավետության տեսանկյունից:

Բանկը պետք է ունենա քաղաքականություն, ընթացակարգեր և համակարգեր՝ աջակցելու այս գործառնական նպատակների ձեռքբերմանը բոլոր ֆինանսական շուկաներում և արժույթներով, որոնցում այն ունի էական վճարահաշվարկային հոսքեր: Կիրառված գործիքները և ռեսուրսները պետք է համապատասխանեցվեն բանկի բիզնես մոդելին և ֆինանսական համակարգում նրա դերին, ինչպես նաև դեպի որոշակի շուկայի ուղղված գործունեությունն իրականացնելու մեթոդին, (օրինակ

վճարահաշվարկային համակարգում անմիջական մասնակցություն կամ ներկայացուցչություն՝ թղթակցային / պահառուական բանկերի միջոցով) և նրան, թե արդյոք այն ապահովում է թղթակցային կամ պահառուական ծառայություններ և օրական վարկային օժանդակություն այլ բանկերին, կազմակերպություններին կամ համակարգերին:

Երբ բանկը վճարահաշվարկային գործունեություն իրականացնելու համար ընտրում է թղթակցին կամ պահառուին ապավինելու տարբերակը, այն պետք է ինքն իրեն հավաստիացնի, որ այս պայմանավորվածությունը թույլ է տալիս բավարարել պարտավորությունները ճիշտ ժամանակին և կառավարել իր օրական իրացվելիության ռիսկերը՝ մի շարք հանգամանքների ազդեցության տակ:

ՄԿԶԲՈՒՆՔ 13. Յուրաքանչյուր բանկ պետք է ունենա իր հիմնական արժույթների գծով իրացվելիության դիրքերի չափման, մոնիթորինգի և հսկողության համակարգեր: Ընդհանուր արտարժույթային իրացվելիության նկատմամբ պահանջների անհամապատասխանությունների ընդունելի մակարդակը գնահատելուն զուգահեռ, բանկը պետք է իրականացնի իր քաղաքականության առանձին վերլուծություններ՝ ըստ առանձին արժույթների:

Տարբեր արտարժույթներով գործարքներ իրականացնելու դեպքում, բանկը ենթարկվում է այն ռիսկին, որ շուկայում արտարժույթի փոխարժեքի կամ իրացվելիության կամ երկուսի զուգահեռ փոփոխությունները կարող են էականորեն մեծացնել բանկի իրացվելիության անհամապատասխանությունները: Այդ փոփոխությունները կարող են տեղի ունենալ ինչպես տվյալ երկրում գոյություն ունեցող գործոնների, այնպես էլ այլ երկրներում տեղի ունեցող իրադարձությունների ազդեցության ներքո: Ամեն դեպքում, բանկը կարող է հայտնաբերել, որ իր արտարժույթային ֆինանսավորման ճեղքվածքը մեծացել է:

Արտարժույթային իրացվելիության կառավարման կոնկրետ հիմնախնդիրները կախված են բանկի գործունեության առանձնահատկություններից: Որոշ բանկերի համար, արտարժույթով արտահայտված ավանդները և կարճաժամկետ վարկային գծերը, որոնք օգտագործվում են դրամով արտահայտված ակտիվները ֆինանսավորելու համար, կարող են լինել տատանումների հիմնական ոլորտը, մինչդեռ մյուսների համար որպես այդպիսին կարող է հանդիսանալ արտարժույթային ակտիվների ֆինանսավորումը դրամով ներգրաված պարտավորություններով: Ընդհանրապես, իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով արտարժույթով արտահայտված իրացվելիությունը պետք է վերլուծության ենթարկվի ըստ տարբեր սցենարների, ներառյալ ստրեսային իրավիճակները:

Ա. Դրամային ակտիվների ֆինանսավորումը արտարժույթով

Երբ արտարժույթն օգտագործվում է դրամային ակտիվները ֆինանսավորելու նպատակով, բանկը պետք է վերլուծի շուկայական պայմանները, որոնք կարող են ազդել արտարժույթի հասանելիության վրա: Բանկերը պետք է նաև գնահատեն իրենց մուտքը ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներին՝ իրենց արտարժույթային պարտավորությունները մարելու նպատակով:

Եթե բանկը ենթադրում է, որ դրամային ավանդները կարող են փոխարկվել արտարժույթի՝ արտարժութային պարտավորությունները կատարելու նպատակով, ապա բանկը պետք է դիտարկի տարբեր սցենարներ՝ կապված արտարժույթի շուկայում տեղի ունեցող փոփոխությունների հետ: Բանկերը պետք է ենթադրեն, որ հնարավոր են որոշակի դժվարություններ կոնկրետ շուկա մուտք գործելու հետ, և արտարժութային շուկայում կարող է լինել իրացվելիության անբավարարություն և/կամ արտարժույթի փոխարժեքը կարող է կտրուկ արժեզրկվել: Այս պարագայում բանկերը, որոնք ունեն արտարժութով արտահայտված վարկային գծերի և ավանդների տեսքով ֆինանսական էական միջոցներ, որոնք նրանք օգտագործում են դրամային ակտիվները ֆինանսավորելու նպատակով, կախվածության մեջ են գտնվում արտարժույթի փոխարժեքների տատանումներից, ինչը կարող է բերել առկա իրացվելիության անհամապատասխանությունների ավելացմանը:

Բ. Արտարժութային ակտիվների ֆինանսավորում

Արտարժութով վարկավորում իրականացնելու դեպքում բանկը պետք է ուշադիր հետևի տարատեսակ ռիսկերին: Բանկի ղեկավարությունը պետք է իրականացնի արտարժույթի շուկաների մուտք գործելու հնարավորության և իր կողմից օգտագործվող արտարժութների փոխարկելիության գնահատում տարբեր սցենարների պայմաններում, որոնց դեպքում բանկն անհրաժեշտություն կզգա փոխարկել իր ֆինանսավորման մեկ արժույթը մյուսով: Անհրաժեշտ է հաշվի առնել արտարժութների փոխարժեքների մի շարք հնարավոր սցենարներ:

Բանկերը, որոնք իրականացնում են հայրենական վարկառուների արտարժութային վարկավորում, ենթակա են տարատեսակ փոփոխությունների ազդեցության: Փոխարժեքի արժեզրկման պայմաններում հայրենական պարտապանները կարող են անկարող լինել կատարել իրենց վճարումները արտարժութային վարկերի գծով՝ դրանով իսկ խնդիրներ առաջացնելով վարկավորող բանկերի համար: Բանկերը պետք է ուշադրություն դարձնեն ըստ վարկառուների արտարժութային վարկավորում իրականացնելու ծավալներին, ինչպես նաև վարկառուների արտարժութային եկամուտների հնարավորություններին՝ վարկերը մարելու նպատակով:

ՄԿՉԲՈՒՆՔ 14. Նախորդ սկզբունքի համաձայն իրականացված վերլուծությունների հիման վրա բանկը, ըստ անհրաժեշտության, պետք է սահմանի և պարբերաբար ստուգի դրամական հոսքերի անհամապատասխանությունների սահմանաչափերը որոշակի ժամանակահատվածի համար՝ ինչպես ըստ բոլոր արտարժութների, այնպես էլ ըստ այն առանձին հիմնական արժույթների, որոնցով բանկն իրականացնում է իր գործառնությունները:

Բանկերը պետք է վերլուծեն առանձին սթրես սցենարների հնարավոր ազդեցությունը բանկի իրացվելիության դիրքերի վրա ըստ առանձին արժույթների: Սա մասնավորապես կարևոր է այն արժույթներով դիրքերի վրա, որոնք համարվում են ոչ բարձր իրացվելի, չնայած միշտ պետք է ի նկատի ունենալ, որ ստրեսային իրավիճակներում նույնիսկ համեմատաբար կայուն և իրացվելի արժույթները կարող են դառնալ ոչ հեշտ փոխարկելի՝ արտարժութային ավանդները վճարելու համար: Բանկերը պետք է կարողանան որոշել, թե կոնկրետ որ արժույթներն են ենթակա

առանձին սահմանափակումների, և պետք է պարբերաբար վերանայեն իրենց մոտեցումները:

ՄԿԶԲՈՒՆՔ 15. Բանկը պետք է ակտիվորեն կառավարի իր գրավային դիրքերը՝ ըստ ծանրաբեռնված և չծանրաբեռնված ակտիվների: Բանկը պետք է հսկի այն իրավաբանական անձին և աշխարհագրական վայրը, որտեղ պահվում է գրավը և այն, թե ինչպես կարող է գրավը մոբիլիզացվել ճիշտ ժամանակին:

Բանկը պետք է տեղյակ լինի գործառնական և ժամանակային պահանջներին՝ կապված գրավի գնահատման հետ՝ հաշվի առնելով նրա ֆիզիկական դիրքը տարածության մեջ:

Բանկը պետք է գնահատի յուրաքանչյուր խոշոր ակտիվի կիրառելիությունը կենտրոնական բանկերի հետ՝ որպես գրավ օգտագործելու համար (օրական, օվերնայթային և ժամկետային վարկավորման գործառնությունների և փոխառությունների համար) և ակտիվների մատչելիությունը խոշոր գործընկերների և սպառողված ֆինանսական շուկաներում դրամական միջոցների մատակարարների համար:

Բանկը պետք է դիվերսիֆիկացնի, զանազանի գրավի իր աղբյուրները՝ հաշվի առնելով տարատեսակ սահմանափակումները, առկա և պոտենցիալ կենտրոնացումները, գների զգայունությունը և շուկայական տարբեր սթրես-սցենարներում մասնավոր սեկտորը ներկայացնող գործընկերների կողմից դրամական միջոցների հասանելիությունը:

Գրավի արդյունավետ կառավարումը պահանջում է, որպեսզի բանկը ունակ լինի բավարարել գրավի հետ կապված մի շարք պահանջներ՝ ներառյալ երկարաժամկետ կառուցվածքային, կարճաժամկետ և օրական ենթադրությունները: Բանկը պետք է ունենա բավարար գրավ՝ բավարարելու սպասված և անսպասելի փոխառության կարիքները և տարբեր ժամկետներում միջանկյալ պահանջների պոտենցիալ բարձրացումները:

Օրինակ, գրավի օրական կառավարումը, պահանջում է գրավի պահանջների և օրական վարկային սահմանափակումների դիտարկում՝ հավաստիացնելու ճիշտ ժամանակին վճարումներ իրականացնելու ունակությունը:

Բանկը, որն օգտագործում է ածանցյալներ, պետք է հաշվի առնի պայմանագրով սահմանված լրացուցիչ գրավի անհրաժեշտության հավանականությունը՝ իբրև շուկայական դիրքերի կամ բանկի վարկանիշի/ֆինանսական դիրքի փոփոխության արդյունք: Բանկի տեղեկատվական համակարգերը պետք է ի վիճակի լինեն զեկուցել, արդյոք բանկն ունի արտակարգ իրավիճակների համար նախատեսված անհրաժեշտ տեսակի և որակի բավարար չափով սահմանափակումներ չունեցող ակտիվներ:

ՄԿԶԲՈՒՆՔ 16. Բանկը պետք է պարբերաբար իրականացնի սթրես-թեստեր տարատեսակ կարճաժամկետ և տևական, բանկին հատուկ և լայն շուկայական սթրեսային սցենարների գծով՝ նույնականացնելու համար պոտենցիալ իրացվելիության սահմանափակումները և երաշխավորելու, որ ընթացիկ զարգացումները համաձայնեցված են բանկի հաստատված իրացվելիության ռիսկի

հանդուրժողականությանը: Բանկը պետք է օգտագործի սթրես-թեստերի արդյունքները՝ իր իրացվելիության ռիսկի կառավարման ռազմավարությունը, քաղաքականություններն ու դիրքերը հարմարեցնելու և արտակարգ իրավիճակների ժամանակ գործողությունների արդյունավետ ծրագրեր մշակելու համար:

Բանկը, որպես կանոն, նորմալ հանգամանքներում իրացվելիությունը կառավարելիս՝ պետք է պատրաստ լինի տնօրինել իրացվելիությունը նաև ստրեսային պայմաններում: Բանկը պետք է պարբերաբար իրականացնի սթրես-թեստեր, սթրես-սցենարի վերլուծություններ՝ նույնականացնելու և չափելու իր ենթարկվածությունը սպազայի հնարավոր իրացվելիության սթրեսների նկատմամբ՝ վերլուծելով բանկի դրամական հոսքերի, իրացվելիության դիրքի, շահութաբերության և վճարունակության վրա դրանց հնարավոր ազդեցությունները: Սթրես-թեստերի արդյունքները պետք է մանրամասն քննարկվեն ղեկավարության կողմից և հիմնվելով այս քննարկման վրա՝ պետք է հիմք հանդիսանան նախաձեռնելու վերականգնողական և մեղմացնող գործողություններ՝ հարմարեցնելու բանկի իրացվելիության պրոֆիլը նրա ռիսկի հանդուրժողականությանը: Սթրես-թեստերի արդյունքները պետք է նաև առանցքային դեր խաղան բանկի՝ արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրի մշակման, ինչպես նաև իրացվելիության սթրեսի դեպքերի հաղթահարմանն ուղղված քաղաքականությունն ու մարտավարությունը որոշելու գործում: Որպես հետևանք, սթրես-թեստերն ու արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրումը սերտորեն փոխկապակցված են:

Սթրես-թեստավորման գործընթաց

Սթրես-թեստավորումը բանկին պետք է հնարավորություն տա վերլուծելու սթրեսային իրավիճակի ազդեցությունը իր համախմբված իրացվելիության դիրքի, ինչպես նաև առանձին կազմակերպությունների և բիզնես ուղղությունների իրացվելիության դիրքի վրա: Անկախ բանկի կազմակերպչական կառուցվածքից և իրացվելիության ռիսկի կառավարման կենտրոնացվածության աստիճանից՝ բանկի համար կարևոր է որոշել, թե ռիսկերը որտեղ կարող էին առաջանալ: Թեստերը պետք է հաշվի առնեն սցենարների կիրառումը ժամանակային տարբեր հորիզոններում:

Թեստավորման ծավալն ու հաճախականությունը պետք է համահունչ լինեն համապատասխանեն բանկի չափին և նրա իրացվելիության ռիսկերի ենթարկվածությանը, ինչպես նաև բանկի հարաբերական կարևորությանը այն ֆինանսական համակարգի շրջանակներում, որում նա գործում է: Բանկերը պետք է հնարավորություն ունենան ավելացնել իրենց կողմից իրականացվող սթրես-թեստերի հաճախականությունը հատուկ պայմաններում, ինչպիսիք են, օրինակ, շուկայում տատանումները, ինչպես նաև վերահսկողների պահանջների դեպքում:

Սթրես-թեստավորման գործընթացում կարևորվում է կառավարման բարձրագույն մարմնի ներգրավվածությունը: Բանկի տնօրինությունը պետք է պահանջի, որ հաշվի առնվեն խիստ և մարտահրավեր նետող սցենարներ՝ նույնիսկ այն ժամանակ, երբ իրացվելիությունը լիուլի է:

Սցենարներ և ենթադրություններ

Սթրես-սցենարների նախագծման ընթացքում բանկի գործունեության բնույթը, գործառնությունները և խոցելի կողմերը պետք է հաշվի առնվեն, որպեսզի սցենարները ներգրավեն հիմնական ֆինանսավորման և շուկայական իրացվելիության ռիսկերը⁴, որոնց բանկը ենթարկվում է: Սրանք ներառում են բիզնես գործունեությանն ու ֆինանսավորման աղբյուրներին առնչվող ռիսկերը: Սահմանված սցենարները պետք է թույլ տան բանկին գնահատել հնարավոր բացասական ազդեցությունը, որ այս գործոնները կարող են ունենալ իր իրացվելիության դիրքի վրա:

Սթրես-թեստերի մշակման ընթացքում պատմությունը կարող է ծառայել իբրև ուղեցույց, սակայն պատմական փաստերը չեն կարող լինել հետագա իրադարձությունների լավ կանխագուշակներ: Բանկի ղատողությունը կարևոր դեր է խաղում սթրես-թեստերի մշակման գործում: Բանկը պետք է նկատի ունենա սցենարների մշակումը և օգտագործված ցնցումների բազմազանությունը: Բանկը պետք է հաշվի առնի կարճաժամկետ և երկարատև, ինչպես նաև հաստատությանը հատուկ և լայն շուկայական սթրեսային սցենարներ իր սթրես-թեստերում, ներառյալ՝ նախկինում բարձր իրացվելի շուկաներում շուկայական իրացվելիության միաժամանակյա անկում, ապահովված և անապահով ֆինանսավորման խիստ սահմանափակումներ, արժույթի փոխարկման խիստ սահմանափակումներ, մեկ կամ ավելի վճարահաշվարկային համակարգերի վրա ներգործող գործառնական կամ կարգավորման խիստ խանգարումներ: Անկախ նրանից, թե նրա ընթացիկ իրացվելիության վիճակը ինչպիսին է, բանկը պետք է հաշվի առնի խիստ ծանր սթրեսային սցենարների հնարավոր ազդեցությունը:

Բանկը պետք է առանձնահատուկ կերպով հաշվի առնի շուկայական իրացվելիության անկման և իրացվելիության ֆինանսավորման նկատմամբ սահմանափակումների միջև կապը: Սա հատկապես կարևոր է նշանակալի շուկայական մասնաբաժին ունեցող կամ առանձնահատուկ ֆինանսավորման շուկաներին ապավինող բանկերի համար:

Բանկը պետք է գիտակցի, որ սթրեսային դեպքերը կարող են միաժամանակ առաջացնել հրատապ իրացվելիության պահանջներ մի քանի արժույթներով և մի քանի վճարահաշվարկային համակարգերում: Ավելին, իրացվելիության այս կարիքները կարող են առաջ գալ հաստատության սեփական, ինչպես նաև նրա հաճախորդ բանկերի և կազմակերպությունների գործունեությունից: Կարիքները կարող են առաջանալ նաև տրված վճարահաշվարկային համակարգում բանկի ունեցած հատուկ դերի պատճառով, ինչպիսին է, օրինակ, պահուստային իրացվելիության տրամադրումը կամ որպես հաշվարկային բանկ հանդես գալը:

Թեստերը պետք է արտացոլեն իրացվելիք ակտիվների հաշվարկման պատշաճ ժամանակացույցը և իրացվելիության միջսահմանային տեղափոխման համար

⁴ Շուկայական իրացվելիության ռիսկն առաջանում է, երբ ակտիվները, որոնք նորմալ պայմաններում մեծ ծավալներով գնվում և վաճառվում են շուկայում, սթրեսային պայմաններում կրում են գնային անկումներ կամ ընդհանրապես դուրս են մնում շուկայական գործառնություններից: Նման ռիսկը հատուկ է ակտիվի կոնկրետ տեսակին: Ֆինանսավորման իրացվելիության ռիսկն առաջանում է, երբ բանկը դժվարություններ է ունենում վճարունակ կոնտրագենտներից միջոցներ ներգրավելիս, ինչն էլ բացասաբար է ազդում իր պարտավորությունները կատարելու ունակությունների վրա:

անհրաժեշտ ժամանակը: Բացի այդ, եթե բանկն ապավինում է մի համակարգից իրացվելիության արտահոսքին մյուսում պարտավորությունների իրականացման համար, այն պետք է հաշվի առնի, որ գործառնական կամ կարգավորման խանգարումները կարող են խոչընդոտել կամ հետաձգել համակարգերի միջև սպասվելիք հոսքերը: Սա հատկապես վերաբերում է ներխաճային փոխանցումներին կամ իրացվելիության կենտրոնացված տնօրինմանը ապավինող բանկերին:

Բանկը սթրես-թեստերի վերաբերյալ եզրակացություններ կատարելու ժամանակ պետք է որդեգրի պահպանողական մոտեցում: Հիմնվելով սցենարի տեսակի և խստության վրա՝ բանկին անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք ենթադրությունների պատշաճությունը, որոնք պոտենցիալ կերպով ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով ցանկով: Այս ցանկն ունի նկարագրական բնույթ, և բանկերը պետք է կիրառեն եզրակացություններ, որոնք առնչվում են, համապատասխանում են իրենց գործունեությանը.

- ակտիվների շուկայի անիրացվելիություն և իրացվելի ակտիվների արժեքի անկում,
- փոքրածավալ ֆինանսավորման արտահոսք,
- ապահովված կամ անապահով մեծածավալ ֆինանսավորման աղբյուրների (ան)հասանելիություն,
- ֆինանսավորման շուկաների կամ ֆինանսավորման աղբյուրների շրջանում դիվերսիֆիկացիայի արդյունավետության միջև փոխկապակցվածություններ
- լրացուցիչ գրավադրման պահանջներ
- ֆինանսավորման ուղղություններ
- արտահաշվեկշռային հոդվածներից և գործառնություններից ներգրավված իրացվելիություն
- վարկանիշի անկման ազդեցությունը
- արտարժույթի փոխարկելիությունը և մուտքը արտարժույթի շուկաներ
- կազմակերպությունների, սեկտորների և սահմանների միջև իրացվելիությունը փոխանցելու ունակությունը՝ հաշվի առնելով իրավական, կարգավորիչ, գործառնական և ժամանակային գոտու սահմանափակումները:
- Կենտրոնական բանկի օժանդակության մատչելիությունը
- ակտիվները դրամական արժեքի վերածելու՝ բանկի գործառնական ունակությունը:
- ապագա հաշվեկշռի աճի գնահատականները

Բանկը իր սթրես-թեստերում պետք է հաշվի առնի շուկայի այլ մասնակիցների հնարավոր վարքագծային արձագանքը շուկայական սթրեսի դեպքերին և ծավալին, որի նկատմամբ հաճախակի արձագանքները կարող են ակտիվացնել շուկայական շարժումները և սրել շուկայական լարվածությունը: Բանկը պետք է նաև նկատի ունենա

իր սեփական վարքագծի հավանական ազդեցությունը շուկայի այլ մասնակիցների վրա:

Բանկն իր սթրես-սցենարներում պետք է անդրադառնա նրան, թե գործընկերների կամ նրանց թղթակիցների, պահառուների վարքագիծը ինչպես կազդի դրամական հոսքերի ժամկետայնությունների վրա:

Բանկը պետք է նաև հասկանա իր հաճախորդների՝ օրական վարկի օգտագործման վրա սթրեսային դեպքերի ազդեցությունը, և թե ինչպես են այդ կարիքներն անդրադառնում իր սեփական իրացվելիության դիրքի վրա:

Սցենարի մշակումը պետք է պարբերաբար ենթարկվի վերանայումների՝ երաշխավորելու, որ փորձարկված սցենարների բնույթն ու խստությունը բանկին համապատասխան և պատշաճ են: Վերանայումները պետք է նկատի ունենան շուկայական պայմանների փոփոխությունները, բանկի բիզնես մոդելի և գործունեության բնույթի, չափի կամ ամբողջականության փոփոխությունը և սթրեսային իրավիճակներում իրական փորձերը:

Գործոնների նույնականացման և վերլուծության համար, որոնք կարող են զգալի ազդեցություն ունենալ իր իսկ իրացվելիության պրոֆիլի վրա, բանկը կարող է իրականացնել սթրես-թեստի արդյունքների զգայունության վերլուծություն՝ հաստատելու առանցքային ենթադրությունները: Զգայունության նմանատիպ վերլուծությունները որոշակի գործոնների նկատմամբ բանկի խոցելիության աստիճանի վերաբերյալ լրացուցիչ ցուցումներ կարող են ապահովել:

Արդյունքների օգտագործում

Բանկի տնօրինությունը պետք է վերանայի սթրես-թեստի սցենարները և ենթադրությունները, ինչպես նաև սթրես-թեստերի արդյունքները: Բանկի՝ սցենարների և ենթադրությունների ընտրությունը պետք է փաստաթղթավորվի և վերանայվի սթրես-թեստի արդյունքների հետ համատեղ: Սթրես-թեստերի արդյունքները և խոցելի կողմերն ու ցանկացած հետևանքային գործողություն պետք է զեկուցվի և քննարկվի խորհրդի ու բանկի տնօրինության հետ: Բանկի տնօրինությունը պետք է ներառի սթրես-թեստի արդյունքները բանկի ռազմավարական ծրագրավորման և կազմակերպության ռիսկերի կառավարման ամենօրյա պրակտիկայի մեջ: Սթրես-թեստերի արդյունքները պետք է ուղղակիորեն դիտարկվեն ներքին սահմանափակումների սահմանման ժամանակ:

Բանկի տնօրինությունը պետք է որոշի, թե ինչպես պետք է ներգրավել սթրես-թեստի արդյունքները բանկի արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրի մեջ:

ՄԿԶԲՈՒՆՔ 17. Բանկը պետք է ունենա չնախատեսված իրավիճակներում գործողությունների ծրագիր, որը պետք է նախատեսի բանկի գործողություններն իրացվելիության ճգնաժամի պայմաններում և ներառի ընթացակարգ՝ դիմակայելու դրամական հոսքերի անբավարարությանը արտակարգ իրավիճակներում:

Բանկի ունակությունը՝ ճիշտ ժամանակին և առանց էական ծախսերի իր գործառնությունները կամ դրանց մի մասը ֆինանսավորելու կարողության ինչպես

ժամանակավոր, այնպես էլ երկարաժամկետ խափանումներին դիմագրավելու համար, կարող է կախված լինել բանկի ունեցած՝ արտակարգ իրավիճակներում բանկի գործողությունների ծրագրի համարժեքությունից: Արդյունավետ ծրագիրը պետք է ուղղված լինի երկու կարևոր հարցերի.

- արդյո՞ք բանկի ղեկավարությունն ունի մշակված քաղաքականություն ճգնաժամին դիմագրավելու համար,
- արդյո՞ք բանկի ղեկավարությունն ունի ներդրված ընթացակարգեր արտակարգ իրավիճակներում իր միջոցները գնահատելու համար:

Բանկի ղեկավարությունը պետք է այս հարցերին նայի իրատեսականորեն՝ որոշելու համար, թե ինչպես է կարող բանկը գործել հանգամանքների «աննորմալ» փոփոխությունների պայմաններում: Բացի այդ, բանկի ղեկավարությունը պետք է բացահայտի և հասկանա այն իրադարձությունները, որոնք կարող են սկիզբ հանդիսանալ իրացվելիության արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրի կիրառման համար:

Ա. Քաղաքականություն

Իրացվելիության խնդիրների վերացման հետ կապված արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագիրը պետք է բաղկացած լինի մի քանի տարրերից: Առավել կարևոր են այն տարրերը, որոնք ներառում են պրոցեսների կառավարման կոորդինացիան: Գործողությունների ծրագիրը պետք է նախատեսի այնպիսի ընթացակարգեր, որոնք կապահովեն, որպեսզի տեղեկատվության հոսքերը լինեն անխափան և ճիշտ ժամանակին, և բանկի ղեկավարությանը տրամադրի «արժեքավոր» տեղեկատվություն, որն անհրաժեշտ կլինի արագ որոշումներ կայացնելու համար: Պարտականությունների ճիշտ տարանջատումը պետք է լինի այնպիսին, որ բանկի աշխատակիցները հստակ հասկանան, թե ինչ է սպասվում իրենցից պրոբլեմային իրավիճակների ժամանակ:

Ծրագրի այլ կարևոր տարր պետք է լինի ակտիվների և պարտավորությունների «պահվածքի» փոփոխություններին ուղղված կոնկրետ գործողությունների համակարգը: Բացի այն, որ բանկը կարող է ենթադրություններ անել, թե ինչպես իրենց կպահեն ակտիվներն ու պարտավորությունները կոնկրետ պայմաններում, բանկը կարող է նաև հնարավորություն ունենալ փոփոխելու դրանք: Օրինակ, բանկը կարող է գալ այն եզրակացության, որ ինքը կունենա իրացվելիության անբավարարություն ճգնաժամի պայմաններում՝ հիմնվելով իր ենթադրությունների վրա՝ կապված ակտիվների վաճառքի հետ կապված ապագա դրամական ներհոսքերի և/կամ ավանդների դուրս բերման հետ կապված ապագա դրամական արտահոսքերի ծավալներից: Ծգնաժամի ի հայտ գալու պայմաններում, այնուամենայնիվ, բանկը կարող է շուկայում յուրացնել իր ակտիվներն ավելի «ագրեսիվ» կամ վաճառել իր այն ակտիվները, որը չէր վաճառի նորմալ շուկայական պայմաններում՝ դրանով իսկ լրացնելով իր դրամական ներհոսքերը:

Ծրագրի հաջորդ տարրը ներառում է հարաբերությունների ձևավորումն ու պահպանումը պարտատերերի, պարտապանների, արտահաշվեկշռային գործառնությունների հետ կապված հաճախորդների հետ: Առաջացած խնդիրների

ծավալների և ինտենսիվության աճի դեպքում, բանկը պետք է որոշի, թե որ ակտիվներից է նա հրաժարվելու: Ըստ էության, բանկը պետք է ուսումնասիրի իր հաշվեկշռի ամբողջ ակտիվային մասը և որոշի այն ակտիվները, որոնք ամենաքիչ վնասը կհասցնեն բանկի գործարար հարաբերություններին և բանկի կայունության վերաբերյալ հասարակության ընկալմանը: Միևնույն ժամանակ, պարտատերերի հետ հարաբերությունները բանկի համար դառնում են ավելի կարևոր շուկայի աննորմալ և անկայուն պայմաններում: Եթե բանկի ռազմավարությունը բանկի պարտավորությունների կառավարչից պահանջում է պահպանել մշտական կապ բանկի կոնտրագենտների և խոշոր պարտատերերի հետ շուկայում տեղի ունեցող հարաբերական խաղաղության պայմաններում, ապա աննորմալ պայմաններում բանկն ավելի մեծ հնարավորություններ կունենա պահպանել իր ֆինանսավորման աղբյուրները:

Բ. Ռեզերվային իրացվելիություն

Արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագիրը պետք է ներառի նաև ընթացակարգեր՝ հատուցելու համար դրամական հոսքերի անբավարարությունը անբարենպաստ պայմաններում: Բանկերն ունեն ֆինանսավորման տարատեսակ աղբյուրներ, ներառյալ նախկինում չօգտագործվող վարկային հնարավորությունները: Կախված իրացվելիության խնդիրների ծավալից և ուժգնությունից՝ բանկը կարող է որոշել օգտագործել մեկ կամ մի քանի ֆինանսավորման աղբյուր: Ծրագիրը պետք է հնարավորինս պարզ նշի ֆինանսական միջոցների այն հնարավոր ծավալները, որոնք հասանելի են գոյություն ունեցող ֆինանսավորման աղբյուրներից, և այն սցենարները, որոնց դեպքում բանկը կարող է օգտվել այդ աղբյուրներից:

ՄԿՁԲՈՒՆՔ 18. Բանկը պետք է ունենա արտակարգ իրավիճակներում ֆինանսավորման ծրագիր՝ ԱԻՖԾ, որը սահմանում է հստակ գործողություններ և ընթացակարգեր արտակարգ իրավիճակներում իրացվելիության կրճատումներին դիմակայելու ուղղությամբ: ԱԻՖԾ-ն պետք է ուրվագծի քաղաքականություն կառավարելու մի շարք սթրեսային իրավիճակներ, հաստատի պատասխանատվության հստակ սահմաններ, ներառի կարգադրությունների և աճի ընթացակարգեր և պարբերաբար փորձարկվի և թարմացվի՝ հավաստիացնելու, որ այն գործառնապես ամուր է:

ԱԻՖԾ-ը բանկի՝ արագ կարգով և ողջամիտ գնով իր գործողությունները կամ դրանց մի մասը ֆինանսավորելու ունակության խիստ խանգարումներին արձագանքելուն ուղղված քաղաքականության, ընթացակարգերի, գործողությունների ծրագրերի մեխանիզմ է:

ԱԻՖԾ-ները պետք է համապատասխանեն բանկի ամբողջականությանը, ռիսկի պրոֆիլին, գործառնությունների շրջանակին և բանկի դերին այն ֆինանսական համակարգերում, որում այն գործում է: ԱԻՖԾ-ները պետք է ներառեն կենսունակ, մատչելի և ճկուն կերպով զարգացվող հնարավոր արտակարգ իրավիճակներում ֆինանսավորման գնահատումներ՝ իրացվելիությունը պահպանելու և ամենատարբեր վտանգավոր իրավիճակներում դրամական հոսքերի կրճատումները լրացնելու համար: Արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրերը պետք է հստակեցնեն առկա պոտենցիալ արտակարգ իրավիճակներում ֆինանսավորման աղբյուրները և

այն դրամական միջոցների ծավալը, որոնք բանկի գնահատմամբ՝ կարելի է ստանալ այդ աղբյուրներից և արտակարգ աղբյուրից լրացուցիչ ֆինանսների ձեռքբերման ժամանակը: ԱԻՖԾ-ն պետք է ապահովի ընթացակարգերի բարձր աստիճանի ճկունություն, որպեսզի բանկը կարողանա արագ արձագանքել ամենատարբեր իրավիճակներում:

ԱԻՖԾ-ի նախագծումը, ծրագրերը և ընթացակարգերը պետք է սերտորեն ինտեգրվեն բանկի՝ իրացվելիության ռիսկի շարունակական վերլուծությունների և սթրես-թեստերում կիրառված սցենարների և ենթադրությունների արդյունքների հետ:

ԱԻՖԾ-ները բանկին պետք է նախապատրաստեն բանկին կառավարելու իրացվելիության խիստ սթրեսային մի շարք սցենարներ, որոնք ներառում են ինչպես բանկին հատուկ և ավելի ընդհանրացված լայն շուկայական սթրեսներ, այնպես էլ նրանց միջև հնարավոր փոխազդեցությունը: Ծրագիրը պետք է ընդգրկի ղեկավարության համար ընտրության գնագնացված, դիվերսիֆիկացված մենյու:

ԱԻՖԾ-ը պետք է պարունակի քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք բանկի ղեկավարությանը հնարավորություն կտան ժամանակին կայացնել լավ-հիմնավորված որոշումներ, արագ և հմտորեն գործադրել արտակարգ իրավիճակների չափումները և արդյունավետորեն հաղորդակցվել ծրագիրը ժամանակին և մինիմալ ռեսուրսներով իրականացնելու համար, այդ թվում՝

- դերերի և պատասխանատվությունների հստակեցում՝ ներառյալ ԱԻՖԾ-ն կազմողի իրավասությունները : Ֆորմալ «ճգնաժամային խմբի» ձևավորումը կարող է նպաստել ներքին համակարգմանը և իրացվելիության ճգնաժամի պայմաններում որոշումների կայացմանը:

- ԱԻՖԾ-ի իրականացման համար պատասխանատու խմբի անդամների անուններ և կոնտակտային տվյալներ և խմբի անդամների գտնվելու վայրի տեղեկատվություն

- առանցքային դերերի հաջորդականության նկարագրում

Բանկում որևիցե խափանումները կարգավորելու համար անհրաժեշտ ժամանակին արձագանքմանը նպաստելու ուղղված ծրագիրը պետք է սահմանի որոշումների կայացման հստակ ընթացակարգ, թե երբ ինչ գործողություններ պետք է ձեռնարկվեն, ով պետք է ձեռնարկի դրանք և ինչ խնդիրներ պետք է բարձրացվեն բանկի ավելի բարձր ղեկավարման մակարդակներում: Ծրագիրը պետք է ուղղակիորեն սահմանի ընթացակարգեր՝ կազմակերպելու արդյունավետ ներքին համագործակցություն և հաղորդակցություն բանկի տարբեր բիզնես ուղղությունների միջև: Այն պետք է նաև նշի, թե երբ և ինչպես կապ հաստատել արտաքին կողմերի հետ, ինչպիսիք են վերահսկողները կամ վճարային համակարգի օպերատորները:

Հաղորդակցության ծրագրեր

Ճգնաժամային ցանկացած իրավիճակում հստակ հաղորդակցությունները պետք է ապահովեն տեղեկատվության հուսալի հոսքեր շուկայի մասնակիցների, գործատուների, հաճախորդների, վարկատուների, բաժնետերերի և վերահսկողների միջև:

Այդ պատճառով բանկերը պետք է կազմեն ծրագիր, որը կմատուցի արագ, հստակ, հետևողական և հաճախակի հաղորդակցություն ներքին, ինչպես նաև արտաքին կողմերի հետ, ինչպիսիք են վերահսկող մարմինները կամ համակարգի օպերատորները՝ սթրեսի ժամանակահատվածում՝ բանկում ընդհանուր վստահության մթնոլորտին նպաստելու համար: Ծրագիրը պետք է նաև նշի, թե երբ և ինչպես հաղորդակցվել թղթակիցների, պահառուների, գործընկերների և հաճախորդների հետ, քանի որ այս կողմերի գործողությունները կարող են զգալի կերպով անդրադառնալ բանկի իրացվելիության դիրքերի վրա:

ԱԻՖԾ-ի նախագծում

ԱԻՖԾ-ի նախագծման ժամանակ բանկը պետք է նկատի ունենա

- սթրեսային շուկայական պայմանների ազդեցությունը ակտիվները վաճառելու կամ արժեթղթավորելու իր կարողության վրա
- ակտիվների շուկայի և ֆինանսավորման իրացվելիության միջև կապը, օրինակ՝ առկա շուկայական ֆինանսավորման ընտրանքների խոշոր կամ ամբողջական կորուստը
- արտակարգ իրավիճակներում ֆինանսավորման երկրորդային էֆեկտները
- խմբի անդամների, բիզնես ուղղությունների և տարբեր երկրների միջև իրացվելիության փոխանցման հնարավորությունը՝ հաշվի առնելով իրավական, կարգավորիչ, գործառնական և ժամանակային սահմանափակումներն ու վերահսկողությունը: Այս տարրերը պետք է արտացոլեն բանկի նախկին փորձերը, փորձագիտական դատողությունները, շուկայական պրակտիկան և այն արդյունքները, որ բանկը ձեռք է բերել սթրես-թեստերի իրականացման միջոցով:

ԱԻՖԾ-ն պետք է նաև ներառի օրական կտրվածքով կատարվելիք կարևոր վճարումների ապահովմանն ուղղված հնարավոր քայլեր: Այնպիսի իրավիճակներում, երբ օրական իրացվելիության ռեսուրսները դառնում են սակավ, բանկը պետք է ունենա կարևոր վճարումները նույնականացնելու և ըստ առաջնայնության՝ կարևոր վճարումներն օրակարգելու կամ հաջորդականացնելու ունակություն: Խիստ խանգարումների դեպքում անհրաժեշտ է, որ բանկն ունենա օրական կտրվածքով իրացվելիության լրացուցիչ աղբյուրների ձեռքբերման հնարավորություն, այդ թվում՝ լրացուցիչ գրավի նույնականացման և մոբիլիզացիայի միջոցով: Ինչպես և սթրես-թեստերի դեպքում, ԱԻՖԾ-ն պետք է հաշվի առնի, որ բանկի հաշվարկային կարիքները կարող են առաջանալ ոչ միայն բանկի սեփական, այլ նաև նրա հաճախորդների գործարքների, վճարահաշվարկային համակարգերին մատուցվող ծառայությունների արդյունքում, օրինակ՝ գործելով իբրև արտակարգ իրավիճակներում իրացվելիության մատակարար: ԱԻՖԾ-ն պետք է հաշվի առնի բոլոր կից համակարգերի ռիսկի կառավարման ընթացակարգերը և այդ իսկ առումով լինի բավականաչափ ամուր՝ գործ ունենալու բազմաթիվ վճարահաշվարկային համակարգերում միաժամանակյա խանգարումների հետ:

Հատկապես կարևոր է, որ ԱԻՖԾ-ների և սթրես-սցենարների ձևավորման և վերլուծության ժամանակ համապատասխան բանկային անձնակազմը տեղյակ լինի

տարբեր անձանց և համակարգերի շրջանում իրացվելիության և գրավի փոխանցման և նմանատիպ փոխանցումները կարգավորող սահմանափակումների համար անհրաժեշտ գործառնական ընթացակարգերին: Այսպիսի փոխանցումների համար իրատեսական ժամանակացույցերը պետք է ներգրավվեն իրացվելիության մոդելավորման մեջ:

Փորձարկում, քարմացում և պահպանում

ԱԻՖԾ-ները պետք է ուսումնասիրվեն և պարբերաբար փորձարկվեն՝ երաշխավորելու իրենց արդյունավետությունը և գործառնական իրականացվելիությունը: Այս փորձարկման առանցքային կողմերը ներառում են դերերի ու պատասխանատվությունների համապատասխան և հասկացված լինելու վերաբերյալ հավաստիացումը՝ հաստատելով, որ կոնտակտային տվյալները ուժի մեջ են, հավաստելով դրամի և գրավի փոխանցելիությունը և գնահատելով, որ անհրաժեշտ իրավական և գործառնական թղթաբանությունը տեղում է: Բանկը պետք է պարբերաբար քննության ենթարկի առանցքային ենթադրությունները, ինչպիսիք են, օրինակ, որոշ ակտիվների վաճառքի կամ դրանց գծով ռեպոյի կնքման ունակությունը: Բանկի ղեկավարությունը պետք է ուսումնասիրի ծրագրի բոլոր կետերը՝ հետևելով յուրաքանչյուրի իրականացմանը և հավաստիացնելով, որ իրականացվում են հետամուտ գործողություններ: Բանկի տնօրինությունը պետք է ուսումնասիրի և քարմացնի ԱԻՖԾ-ը գոնե ամեն տարի՝ խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար, կամ ավելի հաճախ՝ ըստ բանկի բիզնեսի կամ շուկայական հանգամանքների փոփոխության:

ԱԻՖԾ-ն պետք է համապատասխանի բանկի գործարար գործընթացների անընդհատության ծրագրերին: Որպես այդպիսին, բանկը իրացվելիության ճգնաժամի և գործարար գործընթացների անընդհատության շուրջ առաջացած խնդիրների կառավարման խմբերի միջև պետք է հաստատի արդյունավետ համագործակցություն: ԱԻՖԾ-ն պետք է մատչելի լինի իրացվելիության ճգնաժամային խմբի անդամների համար:

ՄԿԶԲՈՒՆ-Ը 19. Բանկը պետք է պահպանի չժանրաբեռնված բարձր որակի իրացվելի ակտիվներ, որոնք պետք է ծառայեն իբրև ապահովագրություն՝ ընդդեմ իրացվելիության մի շարք սթրեսային սցենարների: Այս ակտիվների՝ ֆինանսավորման ձեռքբերման համար օգտագործվելու համար չպետք է լինի ոչ մի իրավական, կարգավորիչ կամ գործառնական խոչընդոտ:

Իրացվելիության սթրեսի նկատմամբ բանկի կայունության կարևոր տարրերից է չժանրաբեռնված, բարձր որակի իրացվելի ակտիվների շարունակական առկայությունը, որը կարող է վաճառվել կամ երաշխավորվել մի շարք սթրեսային սցենարներում դրամական միջոցների ձեռքբերման համար: Սա ուղղակիորեն պահանջում է իրացվելիության սթրեսների դեմ որպես ապահովագրություն կիրառվելիք չժանրաբեռնված, բարձր որակի իրացվելի ակտիվների փաթեթի ծավալի հարաբերակցությունը սթրեսի պայմաններում իրացվելիության կարիքների գնահատումներին: Սթրեսի ժամանակ իրացվելիության կարիքների գնահատումները պետք է ընդգրկեն և պայմանագրային, և ոչ պայմանագրային դրամական հոսքերը, ներառյալ դրամական միջոցների դուրս մղման հավանականությունը:

Իրացվելիության փաթեթի ծավալը պետք է համահունչ լինի բանկի՝ հաստատված ռիսկերի հանդուրժողականությանը: Հիմնական ենթադրությունները ներառում են դրամական հոսքերի անհամապատասխանության ծավալի, սթրեսի տևողության և խստության, ինչպես նաև սթրեսային իրավիճակներում ակտիվների ներգրավման կամ յուրացման արժեքի մասին ենթադրությունները: Բանկը պետք է հաստատի, որ իր իրացվելի ակտիվների փաթեթը ձևավորված է պահպանելու բավարար կայունություն անսպասելի սթրեսների նկատմամբ, մինչ այն շարունակում է ճիշտ ժամանակին կատարել իր վճարահաշվարկային պարտավորությունները սթրեսի ամբողջ ընթացքում: Այս կերպ վարվելով՝ բանկը պետք է հաշվի առնի այն գործիքներն ու ռեսուրսները, որոնք հասանելի են օրական կտրվածքով ռիսկերի կառավարման համար:

Ինչ վերաբերում է իր իրացվելիության փաթեթի կազմին, բանկը պետք է պահի առավել վստահելի իրացվելի ակտիվներ, ինչպիսիք են կանխիկ դրամը և բարձրորակ պետական պարտատոմսերը կամ նմանատիպ միջոցները՝ ամենախիստ սթրեսային սցենարների դեմ պաշտպանված լինելու համար: Պակաս լարված, բայց երկարաժամկետ սթրեսային դեպքերից ապահովագրվելու համար բանկը կարող է ընտրել փաթեթի կազմի ընդլայնման միջոցը՝ պահելու այլ չծանրաբեռնված իրացվելի ակտիվներ, որոնք շուկայում յուրացվելի են (օրինակ այն կարող է վաճառվել կամ օգտագործվել որպես գրավ վաճառքի կամ ռեպո գործարքներում)՝ առանց չափազանց մեծ կորուստների կամ զեղչերի հանգեցնելու:

Անհատական ակտիվների շուկայական յուրացվելիությունը կարող է տարբերվել՝ կախված սթրեսային սցենարից և ժամանակահատվածից: Այնուամենայնիվ, գոյություն ունեն որոշ ընդհանուր հատկանիշներ, որոնք հակված են բարձրացնելու առկա ակտիվի իրացվելիությունը, ներառյալ՝ իր կառուցվածքի և ռիսկային հատկանիշների թափանցիկությունը, գնահատման հեշտությունն ու որոշակիությունը, կենտրոնական բանկի կողմից ընդունելիությունը, ակտիվի համար շուկայի խորությունը, և բանկի սեփական հեղինակությունն և ներկայությունը համապատասխան շուկաներում: Բանկը չպետք է ակնկալի, որ տվյալ ակտիվի շուկան իրացվելի է մնալու սթրեսային բոլոր սցենարներում այն պարզ պատճառով, որ այդպիսի շուկան առկա է նորմալ պայմաններում: Ֆինանսավորման ձեռքբերման ուղղված այդ ակտիվների օգտագործման համար չպետք է լինեն իրավական, կարգավորիչ կամ գործառնական խոչընդոտներ, քանի որ այս ակտիվները պետք է հասանելի լինեն ցանկացած ժամանակ՝ բավարարելու իրացվելիության պահանջները՝ նրանց առաջ գալու պահին և ընթացքում: Բանկը պետք է պատրաստ լինի օգտագործել այս ակտիվները խիստ սթրեսի դեպքում:

Բանկը պետք է լինի իրատեսական այն հարցի շուրջ, թե որքան կանխիկ գումար այն ի վիճակի կլինի ձեռք բերել կենտրոնական բանկից ընդունելի (eligible) ակտիվների դիմաց:

ՄԿԶԲՈՒՆՔ 20. Բացահայտումներ. Բանկը պետք է հանրային կերպով բացահայտի էական համարվող տեղեկատվություն, որը շուկայի մասնակիցներին հնարավորություն կտա կատարել դատողություններ տվյալ բանկի իրացվելիության, ռիսկերի կառավարման համակարգի և իրացվելիության դիրքի վերաբերյալ:

Հանրային բացահայտումը բարելավում է թափանցիկությունը, հեշտացնում է գնահատումը, կրճատում է անորոշությունը շուկայում և ուժեղացնում է շուկայական կարգապահությունը: Բանկը պետք է բացահայտի բավարար տեղեկատվություն իր իրացվելիության ռիսկերի կառավարման վերաբերյալ, որպեսզի համապատասխան բաժնետերերը կարողանան ձևավորել հիմնավորված դատողություն բանկի՝ իր իրացվելիության կարիքները բավարարելու ունակության մասին:

Բանկը պետք է բացահայտի իր կազմակերպչական կառուցվածքը և իրացվելիության ռիսկի կառավարման համակարգը: Այն մասնավորապես պետք է բացատրի համապատասխան կոմիտեների, ինչպես նաև տարբեր ֆունկցիոնալ և բիզնես միավորների դերերն ու պատասխանատվությունները: Բանկի կողմից իր իրացվելիության ռիսկերի կառավարման շրջանակների նկարագրությունը պետք է ցույց տա իրացվելիության ռիսկի կառավարման կենտրոնացվածության և ապակենտրոնացվածության աստիճանը: Այնտեղ, որտեղ կիրառվում են կենտրոնացված ռիսկերի կառավարման գործառույթներ, պետք է նկարագրվի խմբային միավորների միջև փոխհամագործակցությունը: Կազմակերպությունում բիզնես միավորների նպատակը ևս պետք է նկարագրվի, օրինակ նշվի այն աստիճանը, որքանով նրանցից ակնկալվում կառավարել իրենց սեփական իրացվելիության ռիսկը:

Որպես իր պարբերական ֆինանսական հաշվետվողականության մաս, բանկը պետք է տրամադրի քանակական տեղեկատվություն իր իրացվելիության դիրքի մասին, որը հնարավորություն է տալիս շուկայի մասնակիցներին պատկերացում կազմել բանկի իրացվելիության ռիսկի մասին: Որոշ բանկերի կողմից ներկայացված քանակական բացահայտումների օրինակները ներառում են տեղեկատվություն բանկի իրացվելիության փաթեթի ծավալի և կազմի վերաբերյալ, լրացուցիչ գրավի պահանջներ՝ իբրև վարկանիշի անկման հետևանք, ներքին սահմանաչափերի արժեքներ և այլ հիմնական չափման միավորներ, որ վերահսկվում են դեկավարության կողմից: Բանկը պետք է ապահովի բավարար որակական քննարկում իր հաշվարկների շուրջ, որը շուկայի մասնակիցներին՝ դրանք հասկանալու հնարավորություն կտա:

Բանկը պետք է բացահայտի լրացուցիչ որակական տեղեկատվություն, որն շուկայի մասնակիցներին ապահովում է հետագա պատկերացում, թե ինչպես է այն տնօրինում իրացվելիության ռիսկը: Որոշ բանկերի կողմից տրամադրված որակական տեղեկատվության մի քանի օրինակներ ներկայացվում են ստորև. (այս ցուցակը ներկայացուցչական է, բայց ոչ սպառիչ)

- իրացվելիության ռիսկերի տեսակները, որոնց բանկը ենթակա է և որոնք այն հսկում է,
- բանկի ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացիա,
- իրացվելիության ռիսկերի մեղմացման համար օգտագործվող այլ հնարքներ, միջոցներ,
- իր իրացվելիության դիրքի և իրացվելիության ռիսկերի չափման համար օգտագործվող կոնցեպցիաներ,

- բացատրություն, թե ակտիվների շուկայի իրացվելիության ռիսկն ինչպես է արտացոլվում բանկի՝ իրացվելիության ֆինանսավորման կառավարման շրջանակներում,

- բացատրություն, թե ինչպես են օգտագործվում սթրես-թեստերը,

- մոդելավորված սթրես-թեստավորման սցենարների նկարագրություն,

- բանկի՝ արտակարգ իրավիճակներում ֆինանսավորման ծրագրերի ուրվագծում և ցուցում, թե ինչպես է ծրագիրը հարաբերվում սթրես-թեստավորմանը,

- իրացվելիության պահուստների պահպանմանն ուղղված բանկի քաղաքականությունը,

- կարգավորիչ սահմանափակումներ խմբի անդամների միջև իրացվելիության փոխանցումների վրա,

- իրացվելիության ներքին հաշվետվողականության հաճախականությունը և տեսակը:

Գլուխ 2. Իրացվելիության բուֆեր

1. Իրացվելիության բուֆերի հասկացությունը

Իրացվելիության ռիսկի կառավարումը բանկերում իրականացվում է մի շարք հաշվարկների և մեծությունների միջոցով, ինչպիսիք են, օրինակ, ֆինանսավորման սահմանաչափերը, սթրես-թեստերի վրա հիմնված իրացվելիության բուֆերները համեմատաբար կարճ և երկար ժամանակահատվածների համար և արտակարգ իրավիճակներում բանկերի գործողությունների ծրագրավորումը:

Իրացվելիության բուֆերը սահմանվում է որպես հասանելի ավելցուկային իրացվելիություն, որը կարող է օգտագործվել կարճաժամկետում իրացվելիության ստրեսի պայմաններում: Այլ կերպ ասած, սա իրացվելիության այն հասանելիությունն է, որը թույլ է տալիս խուսափել որոշակի առանձնահատուկ քայլեր իրականացնելու անհրաժեշտությունից: Բուֆերի մեծությունը պետք է որոշվի որոշակի ժամանակային հորիզոնի համար իրականացված ստրեսային սցենարների ժամանակ հնարավոր առաջացող ֆինանսավորման ճեղքվածքի հիման վրա: Իրացվելիության բուֆերը չպետք է փոխարինի այլ միջոցառումներին, որոնք ձեռնարկվում են ֆինանսական ճեղքվածքը և բանկի ֆինանսավորման աղբյուրները կառավարելու համար:

ՑՈՒՑՈՒՄ 1. Իրացվելիության բուֆերն իրենից ներկայացնում է այն հասանելի իրացվելիությունը, որը բավարարում է իրացվելիության նկատմամբ լրացուցիչ պահանջարկը, որը կարող է առաջանալ կարճ ժամանակահատվածում որևէ ստրեսային պայմանների ի հայտ գալու դեպքում:

Իրացվելիության բուֆերը պետք է որոշվի ըստ երեք հարթությունների՝ ստրեսային պայմանների խստություն և այլ բնութագրիչներ, ժամանակային հորիզոն, որը ֆիքսված է որպես գոյատևման ժամանակահատված (survival period), և բուֆերի կազմի մեջ ընդգրկված ակտիվների բնութագրիչներ:

Իրացվելիության բուֆերները պետք է կառուցվեն՝ օգտագործելով կանխիկ դրամական միջոցները և այնպիսի ակտիվներ, որոնք կապահովեն դրանց միջոցով իրացվելիության ներգրավումը կարճ ժամկետում և կանխատեսվող արժեքով (մեծությամբ): Ընդհանուր առմամբ, խորհուրդ է տրվում իրացվելիության բուֆերի կազմում ընդգրկել միայն այն ակտիվները, որոնք միաժամանակ հանդիսանում են և՛ մասնավոր շուկաներում բարձր իրացվելի, և՛ ընդունելի են կենտրոնական բանկի կողմից: Բուֆերի ավելի երկար ժամանակահատվածի համար (առնվազն մեկ ամիս) այլ բարձր իրացվելի ակտիվներ կարող են ընդունելի լինել իրացվելիության բուֆերի կազմում ընդգրկվելու համար:

Իրացվելիության բուֆերի տեսանկյունից բանկերը պետք է խուսափեն որևէ ակտիվի գծով մեծ կենտրոնացումներ ունենալուց, քանի որ մեծ ծավալով ակտիվների, մասնավորապես համեմատաբար ցածր իրացվելիություն ունեցող ակտիվների յուրացվելիությունը կարող է առաջացնել անիրացվելիություն շուկայում, ինչը կբերի գների անկման և վնասների առաջացման այլ բանկերի մոտ, որոնք ևս ունեն նմանատիպ ակտիվներ:

2. Բուժերի չափի մասին ենթադրություններ

2.1. Հիմնական սկզբունքներ

Քանի որ իրացվելիության ռիսկը մեծամասամբ կոնկրետ կազմակերպությանը հատուկ (institution-specific) ռիսկ է, բանկերը պետք է հարմարեցնեն իրենց իրացվելիության կառավարումը, սթրես-թեստերը և իրացվելիության պահուստները իրենց հատուկ պահանջներին: Սա, այնուամենայնիվ, չի վերաբերվում իրացվելիության ռիսկի այն գործոններին, որոնք առկա են բոլոր բանկերի համար: Իրացվելիության ռիսկը տարբերվում է ըստ բանկերի: Իրացվելիության ռիսկի բոլոր աղբյուրները պետք է ուսումնասիրվեն այս կամ այն մոտեցմամբ, անկախ նրանց բնույթից (ակտիվներ թե պարտավորություններ, հաշվեկշռային թե արտահաշվեկշռային հոդվածներ և այլն):

2.2. Ստրեսների տեսակները, որոնք պետք է հաշվի առնվեն

Բուժերի նախագծումը սկզբնական փուլում կախված է լինելու այն ենթադրություններից, որոնք կատարվում են ստրեսային իրավիճակը որոշելու համար: Ընդհանրապես, հաշվի են առնվում ստրեսների երեք խումբ՝ ունիկալ (բանկին հատուկ) սթրես, ընդհանուր շուկայական սթրես և այդ երկուսի համատեղություն: Այդ երկու ստրեսների համատեղությունը իրենից չի ներկայացնում զուտ այդ երկու տեսակի ստրեսների պարզ գումարում իրար, քանի որ հնարավոր է բազմաթիվ կապերի առկայություն, որը ևս պետք է հաշվի առնել: Ստրեսների այս երեք տեսակները, որպես կանոն, ծածկում են այն բոլոր հնարավոր սթրես-սցենարները, որոնց հետ կարող է բախվել բանկը:

Ունիկալ (բանկին հատուկ) սթրեսը սահմանվում է որպես շուկայական վստահության կորուստ բանկի կամ բանկային խմբի կողմից: Այն կարող է ազդել բանկի կամ բանկային խմբի ֆինանսավորման բոլոր աղբյուրների վրա:

Ընդհանուր շուկայական սթրեսը սահմանվում է որպես մի քանի շուկաներում հասանելի ֆինանսավորման միաժամանակ անկում և ֆինանսական ակտիվների գների վերաբերյալ անորոշություն կամ դրանց նվազում: Ընդհանուր շուկայական շուկի դեպքում պետք է ուշադրություն դարձվի յուրացվելի ակտիվների (կամ դրանց մի մասի) արժեքի վրա բացասական ազդեցության վրա:

ՑՈՒՑՈՒՄ 2. Բանկերը պետք է կիրառեն երեք տիպի սթրես-սցենարներ՝ ունիկալ, ընդհանուր շուկայական և դրանց համատեղության: Ունիկալ սթրեսը պետք է ենթադրի չապահովված խոշորածավալ ֆինանսավորման փոխարկման բացակայություն և մանր ավանդների որոշակի արտահոսք: Ընդհանուր շուկայական սթրեսը պետք է ենթադրի որոշ ակտիվների իրացվելիության արժեքի անկում և ֆինանսավորման շուկայական պայմանների վատթարացում:

Սթրեսի յուրաքանչյուր տեսակ պետք է բնութագրվի կոնկրետ իրեն հատուկ ենթադրություններով: Այս սթրես-սցենարները պետք է համապատասխանեն բանկի այլ սթրես-սցենարներին՝ համոզվելու համար, որ ռիսկերի կառավարման ամբողջ համակարգը միասնական է և տրամաբանորեն ինտեգրված:

2.3. Ժամանակային հորիզոններ

Բուժերի կառուցման ժամանակ կիրառվող ժամանակային հորիզոնը պետք է բաժանվի երկու մասի՝ կարճատև սուր ստրեսային հատված (օրինակ, մեկ կամ երկու շաբաթ), որին հետևում է ավելի քիչ սրությամբ, բայց ավելի տևական սթրես (օրինակ, մինչև մեկ կամ երկու ամիս): Այս մոտեցումը նպատակ ունի դիտարկել սթրես-սցենարների տարբեր խստության աստիճաններ, հետևաբար նաև՝ իրացվելիության բուժերի միջոցով ստրեսներին դիմակայելու տարբեր ուղիներ: Այս ժամանակային հորիզոնների ներքո էլ այլ հաշվարկները պետք է իրականացվեն, ինչպիսիք են օրինակ արտակարգ իրավիճակներում բանկի գործողությունների ծրագրավորումը, բիզնես-մոդելի փոփոխությունները և այլն:

Այս մոտեցմամբ բուժերի կառուցումը թույլ կտա համոզվել, որ բուժերը կազմված է համարժեք ակտիվներից, որոնք կարող են յուրացվել դիտարկվող ստրեսային պայմանների ներքո: Ստրեսի՝ վերոնշված երկու ժամանակահատվածներից յուրաքանչյուրի հարաբերական տևողությունը որոշում է բուժերի այն քանակությունը, որը պետք է բանկը պահի ակտիվների տարբեր ձևերում՝ ակտիվների իրացվելիության տարբեր աստիճանների պարագայում: Կարճ ժամկետների համար միայն կանխիկը և կանխիկին շատ մոտիկ համարվող ակտիվները կարող են որակվել որպես բուժերի համար ընդունելի, մինչդեռ ժամանակահատվածի մնացած մասի համար այլ ակտիվներ ևս կարող են ընդունելի համարվել:

ՑՈՒՑՈՒՄ 3. Նվազագույնը մեկ ամիս տևողություն ունեցող գոյատևման ժամանակահատված (survival period) պետք է կիրառվի՝ որոշելու համար իրացվելիության բուժերի ընդհանուր չափը ընտրված սթրես-սցենարի պայմաններում: Այս ժամանակահատվածի ներքո, առնվազն մեկ շաբաթ տևողությամբ ավելի կարճ ժամանակային հորիզոն պետք է սահմանվի՝ արտացոլելու համար շատ կարճ ժամկետում ավելի բարձր հուսալիության մակարդակի պահպանման անհրաժեշտությունը:

Որպես «գոյատևման ժամանակահատված» ընտրված ցանկացած ժամանակահատվածի համար անհրաժեշտ է համոզվել, որ բուժերը թույլ կտա բանկին պահպանել իր գոյությունը այս ժամանակահատվածի յուրաքանչյուր օրը: Բանկերը պետք է մշակեն գործողությունների համապատասխան պլան՝ կարգավորելու համար այնպիսի իրավիճակները, երբ բուժերի մեծությունը նվազի սթրես-սցենարի միջոցով պահանջվող նվազագույն մեծությունից:

3. Բուժերի կառուցումը

Բուժերը պետք է կազմված լինի հիմնականում կանխիկ դրամից և նույնիսկ ստրեսային պայմաններում առավել վստահելի իրացվելի ակտիվներից, որոնք բանկը կարող է վաճառել կամ որոնցով կարող է ռեպո կնքել առանց խոշոր գնային զեղչերի, ինչը հակառակ պարագայում կարող էր խեղաթյուրել շուկայի վստահությունը նման ակտիվների նկատմամբ և առաջացներ կորուստներ այլ բանկերի համար, որոնք ունեն նմանատիպ ակտիվներ (գործիքներ):

Մինչդեռ բարձր իրացվելի և շուկայում յուրացվելի ակտիվները պետք է կազմեն բուֆերի հիմնական մասը՝ թույլ տալով ծածկել ստրեսի հետևանքների մեծամասնությունը, այլ ակտիվներ, որոնց յուրացման համար պահանջվում է մի փոքր ավելի երկար ժամանակ, կարող են նույնպես ներառվել բուֆերի կազմում, որոնք այնուհանդերձ կօգտագործվեն բանկի գոյատևման ժամանակահատվածի (survival period) ավելի հետագա պահանջները բավարարելու համար: Ակտիվները, որոնք ընտրվում են բուֆերի մեծ մասը կազմելու համար, պետք է ունենան յուրացվելիության բարձր հավանականություն:

ՑՈՒՑՈՒՄ 4. Իրացվելիության բուֆերը պետք է կազմված լինի կանխիկից և այնպիսի ակտիվներից, որոնք միևնույն ժամանակ և՛ ընդունելի են կենտրոնական բանկի կողմից, և՛ բարձր իրացվելի են մասնավոր շուկաներում: Բուֆերի ավելի երկար ժամանակահատվածի համար, ակտիվների ավելի լայն շրջանակը կարող է համարվել ընդունելի՝ կախված այն բանից, թե բանկը որքանով ունակ կլինի դրանց միջոցով իրացվելիություն ներգրավել սթրեսային պայմաններում՝ որոշակի ժամանակահատվածում:

Իրացվելիության բուֆերը յուրաքանչյուր բանկի իրացվելիության ռիսկի կառավարման հիմնական բաղկացուցիչն է՝ հասանելի լինելով այն դեպքերում, երբ բանկը տուժում է այս կամ այն ստրեսային իրավիճակից:

Ընդունելի կանխիկ փողը այն կանխիկն է, որը համապատասխանում է կենտրոնական բանկի կողմից սահմանված փողի բազայի սահմանմանը: Այն պետք է բացառի այն կանխիկ դրամը, որն անհասանելի է բանկի համար, ինչպիսին է, օրինակ, կանխիկ դրամը բանկումատներում:

Բանկերը պետք է պահեն այնպիսի ակտիվներ, որոնք միաժամանակ և ընդունելի են կենտրոնական բանկի կողմից, և՛ իրացվելի են մասնավոր շուկաներում՝ պաշտպանվելու համար խիստ, բայց կարճատև իրացվելիության ստրեսի ժամանակահատվածներից, երբ շուկայական իրացվելիությունը կրում է որոշակի ճնշումներ, և բանկը պետք է ունակ լինի անմիջապես և կանխատեսվող գնով ներգրավել իրացվելիություն առանց շուկայական ճնշումներին ենթարկվելու:

Մինչև նվազագույնը մեկ ամիս տևող ժամանակային հորիզոնների համար բանկը կարող է իր մոտ պահել իրացվելի ակտիվների ավելի մեծ շրջանակ: Իրենց ներքին քաղաքականություններում, բանկերը պետք է սահմանեն այնպիսի չափանիշներ, որոնք հնարավորություն կտան տարբերակել այնպիսի ակտիվները, որոնք առավել մեծ հավանականությամբ կմնան իրացվելի ստրեսային պայմաններում: Այսպիսի չափանիշներից կարող է լինել, օրինակ, արժեթղթի թողարկողի բնութագիրը, նշված ակտիվի գծով առկա շուկայի ծավալները և այլն:

Բանկերի համար կարևորվում է հստակ պատկերացում ունենալը այն պայմանների մասին, որոնց պարագայում կենտրոնական բանկը կարող է ֆինանսավորում տրամադրել գրավի համար ընդունելի համարվող ակտիվների դիմաց ստրեսային պայմաններում: Բանկերը պետք է պարբերաբար ստուգեն, թե արդյոք կենտրոնական բանկի իրացվելիություն կտրամադրի իրենց առկա ակտիվների դիմաց և, պետք է կատարեն համապատասխան ճշգրտումներ՝ հաշվի առնելով

ֆինանսավորման միջոցներում առկա այն նվազումները, որոնց կարող են տեղի ունենալ ստրեսային իրավիճակներում: Բացի այդ, բանկերը պետք է իրականացնեն բուֆերի կազմի մեջ մտնող ակտիվների բավականաչափ դիվերսիֆիկացիա՝ երաշխավորելու համար իրենց վերահսկողներին, որ իրենք իրենց հույսը չեն դնում մեծապես կենտրոնական բանկից ներգրաված միջոցների վրա՝ որպես իրացվելիության հիմնական աղբյուրի:

Բուֆերը ենթադրվում է օգտագործել ստրեսային իրավիճակներին դիմակայելու համար, մինչդեռ բանկի իրացվելիության նկատմամբ կարգավորիչ պահանջները պետք է պահպանվեն բանկի գործունեության ամբողջ ընթացքում: Քանի որ իրացվելիության բուֆերը սահմանվել է որպես բանկի առօրյա գործունեության ընթացքում պահանջվող միջոցների նկատմամբ ավելցուկային իրացվելիության, բանկերը պետք է գնահատեն նաև, թե որքանով են կարգավորիչ պահանջները ևս գերազանցում բանկի ամենօրյա գործունեության համար անհրաժեշտ իրացվելիության միջոցները: Այս դեպքում հնարավոր է որոշակի կոնֆլիկտի առաջացումը, և անհրաժեշտ է իրականացնել ակտիվների որոշակի որակական սահմանազատում: Այն դեպքում, երբ ակտիվը որակապես համապատասխանում է երկու նպատակներին էլ, իրացվելիության բուֆերը պետք է հաշվարկվի՝ որպես ավելցուկ կարգավորիչ պայմանների նկատմամբ: Մյուս բոլոր դեպքերում որևէ կոնֆլիկտ առկա չէ, և երկու պահանջներն էլ պետք է գնահատվեն առանձին-առանձին՝ առանց միմյանց վրա ազդելու: Բոլոր դեպքերում, բանկերի համար կարևոր է երկխոսություն հաստատել կարգավորող մարմնի հետ այս երկու նպատակների միջև հնարավոր կոնֆլիկտների առաջացման դեպքում:

ՑՈՒՑՈՒՄ 5. Բանկերը պետք է կառավարեն իրացվելի ակտիվների իրենց պաշարները՝ հնարավորինս համոզվելու համար, որ դրանք հասանելի կլինեն ստրեսների ժամանակ: Նրանք պետք է խուսափեն արժեթղթերում մեծ կենտրոնացումներ ունենալուց, և չպետք է լինեն որևէ իրավական, կարգավորիչ կամ գործառնական խոչընդոտներ այդ ակտիվներն օգտագործելու համար:

Բանկերը պետք է փորձեն պարբերաբար ակտիվ լինել բոլոր այն շուկաներում, որտեղ իրենք ունեն ակտիվներ: Քանի որ կարող են լինել որոշակի իրավական կամ միջպետական կարգավորիչ խոչընդոտներ, որոնք սահմանափակեն բանկերի հնարավորությունը օգտագործելու իրացվելի ակտիվների իրենց բուֆերները որոշակի ժամանակահատվածներում կամ որոշակի նպատակներով, բանկերը պետք է նաև համոզվեն, որ իրենք գիտակցում են այն խոչընդոտները, որոնք առկա են տարբեր կարգավորման դաշտերում:

ՑՈՒՑՈՒՄ 6. Բանկային խմբի ներսում իրացվելիության բուֆերի տեղաբաշխվածությունը և չափը պետք է համարժեքորեն արտացոլի խմբի կառուցվածքն ու գործառնությունները՝ նվազեցնելու համար հնարավոր իրավական, կարգավորիչ կամ գործառնական խոչընդոտների ազդեցությունը բուֆերի ակտիվների օգտագործման վրա:

Տարբեր իրավաբանական անձանց, կարգավորման դաշտերի և տարածաշրջանների համար բուֆերի համարժեք տեղաբաշխվածության և չափերի որոշումը պետք է համապատասխանի բանկի պահանջներին և կոնկրետ իրավիճակին:

Գոյություն չունի իրացվելիության կառավարման կազմակերպման մեկ միասնական մոդել. այն կարող է տատանվել լրիվ կենտրոնացված կառավարման մոդելից մինչև լրիվ ապակենտրոնացված կառավարման մոդելը: Բուֆերի կենտրոնացված կառավարումը կարող է ընդունելի լինել այն դեպքերում, եթե երևում է, որ գոյություն չունեն խմբի ներսում իրացվելիության փոխանցման որևէ սահմանափակումներ և խոչընդոտներ, և կարգավորիչ մարմինը բավարարված է, որ առկա է կայուն հնարավորություն փոխանցել միջոցները խմբի ներսում ստրեսային պայմաններում:

Որպես հիմնական սկզբունք, երբ իրացվելիության կառավարման համար պատասխանատու մարմինն ունի մեծ պաշարներ որևէ արտարժույթով, այն, որպես կանոն, կրում է նաև տվյալ արտարժույթով արտահայտված մեծ իրացվելիության ռիսկ, հետևաբար պետք է ունենա նաև բուֆեր դրա դիմաց: Մի քանի տարատեսակ բուֆերների պահպանումը կարող է հավելյալ ծախսեր պատճառել բանկերին, բայց միևնույն ժամանակ այն կպաշտպանի բանկին տվյալ արտարժույթի շուկայում հնարավոր խափանումների ռիսկից, որը հակառակ դեպքում կարող էր նվազեցնել բանկի ունակությունը՝ փոխարկելու մեկ արժույթը մյուսով:

Միևնույն ժամանակ, բուֆերների չափից դուրս մեծ ծավալները ևս անցանկալի են բանկերի համար: Մեծ ծավալների ավելցուկային իրացվելիությունը բանկի համար նշանակում է ոչ եկամտաբեր կամ ցածր եկամտաբեր ակտիվների մեծ պաշարներ բանկի հաշվեկշռում, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ բանկի տոկոսային եկամուտների և, ընդհանրապես, բանկի արդյունավետության ցուցանիշների վրա: Միևնույն ժամանակ, կանխիկ դրամական միջոցները իրենց վրա է ապես կրում են գնաճի բացասական ազդեցությունը, ինչը ևս գնաճի բարձր մակարդակի պարագայում կարող է բացասական ազդեցություն ունենալ բանկի արդյունավետության վրա:

Ըստ այդմ, անհրաժեշտ ավելցուկային իրացվելիության ունիվերսալ մակարդակ բոլոր բանկերի համար գոյություն չունի: Իրացվելիության բուֆերը հաշվարկելիս և ավելցուկային իրացվելիության նկատմամբ պահանջարկը գնահատելիս յուրաքանչյուր բանկ պետք է ելնի իր չափերից, առանձնահատկություններից, գործառնությունների ծավալներից և այլն:

4. Իրացվելիության ծածկույթի գործակիցը և Չուտ կայուն ֆինանսավորման գործակիցը⁵

Իրենց իրացվելիության ռիսկը կառավարելու նպատակով, բանկերը կարող են

⁵ Գործակիցների հաշվարկման ամբողջական մեթոդաբանությունը տես՝ Basel Committee on Banking Supervision, “International framework for liquidity risk measurement, standards and monitoring”, BIS, December 2009.

օգտվել Իրացվելիության ծածկույթի գործակցի և Ջուտ կայուն ֆինանսավորման գործակիցներից, որոնց նշակվել են Բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի կողմից:

Իրացվելիության ծածկույթի գործակիցը (Liquidity coverage ratio, LCR) հիմնվում սրբես-թեստի վրա: Ստրեսային իրավիճակը ենթադրում է ֆինանսական շուկաների սառեցում, երբ ծայրահեղ դժվար է լինելու ներգրավել նոր միջոցներ, իսկ կարճաժամկետ պարտավորությունները պետք է մարվեն ժամկետը լրանալուն պես: Իրացվելի ակտիվները պետք է օգտագործվեն պարտավորությունները մարելու համար՝ սակայն հաշվի առնելով այն գործոնը, որ ստրեսային շուկայական պայմաններում դրանք կիրացվեն ավելի էժան գնով:

Իրացվելիության ծածկույթի գործակիցը պահանջում է պահել այնքան բարձր իրացվելի ակտիվներ, որ բավարար լինի ծածկել դրամական միջոցների զուտ արտահոսքը 30-օրյա ժամանակահատվածում ստրեսային իրավիճակում, և հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$\frac{\text{Բարձր իրացվելի ակտիվներ}}{\text{Չբանկան միջոցների զուտ արտահոսքը 30 – օրյա ժամանակահատվածում}} \geq 100\%$$

Բարձր իրացվելի ակտիվները կազմված են 60%-ով «առաջին մակարդակի բարձր իրացվելի ակտիվներից»՝ կանխիկ, ԿԲ-ում պահվող միջոցներ և պետական պարտատոմսեր, և 40%-ով՝ «երկրորդ մակարդակի բարձր իրացվելի ակտիվներից»՝ պետական կազմակերպությունների պարտավորություններ, AA- և բարձր վարկանիշ ունեցող կորպորատիվ արժեթղթեր և ծածկված պարտատոմսեր:

Գործակցի հաշվարկման համար յուրաքանչյուր ֆինանսավորման աղբյուրի համար սահմանվում են արտահոսքի ցուցանիշներ, որոնք բնորոշ կլինեն ստրեսային իրավիճակում: Արտահոսքի ցուցանիշը ցույց է տալիս համապատասխան ֆինանսավորման աղբյուրի մեծությունը, որը կմարվի 30 օրվա ընթացքում և այլևս չի վերականգնվի⁶:

Դրամական միջոցների զուտ արտահոսքը ստանալու համար դրամական միջոցների արտահոսքից նվազեցվում է դրամական միջոցների ներհոսքը 30-օրյա կտրվածքով:

Ջուտ կայուն ֆինանսավորման գործակիցը (Net stable funding ratio, NSFR) համեմատության մեջ է դնում իրացվելի ակտիվները և մինչև 1 տարի մարման ժամկետ ունեցող պարտավորությունները: Նպատակն է՝ բանկին ստիպել ներգրավել ավելի երկարաժամկետ միջոցներ կամ մեծածավալ ներդրումներ կատարել իրացվելի ակտիվներում:

Այս գործակիցը սահմանում է կայուն ֆինանսավորման ռեսուրսների

⁶ Ներկայումս Բազելյան կոմիտեի կողմից սահմանված ցուցանիշները վերջնական արժեքներ չունեն և պրակտիկ կիրառման արդյունքների հիման վրա կարող են ենթարկվել փոփոխության:

նվազագույն չափը մեկ տարուց ավելի ժամանակահատվածի համար՝ ելնելով բանկի ակտիվների բնույթից և գործունեության առանձնահատկություններից:

Գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\frac{\text{Կայուն և ֆինանսավորման առկա գումար}}{\text{Կայուն և ֆինանսավորման պահանջվող գումար}} \geq 100\%$$

Առկա կայուն ֆինանսավորումը կապիտալի և պարտավորությունների այն մասն է, որը կարող է օգտագործվել որպես կայուն ֆինանսավորման աղբյուր մեկ տարուց ավելի ժամանակաշրջանում՝ ստրեսային իրավիճակում: Պահանջվող կայուն ֆինանսավորումը կախված է բանկի ակտիվների իրացվելիությունից, հետհաշվեկշռային հոդվածների բնույթից և բանկի կողմից իրականացվող գործառնությունների տեսակից:

Այս գործակցի շրջանակներում ԿԲ-ից ներգրավված միջոցները (բացառությամբ բաց շուկայական գործառնությունների արդյունքում ներգրավված միջոցների) հաշվի չեն առնվում, այսինքն ԿԲ-ը չի դիտվում որպես ֆինանսավորման ռեսուրսների անսպառ աղբյուր:

Գործակցի հաշվարկման համար սահմանվում են յուրաքանչյուր ֆինանսավորման աղբյուրի համար առկայության գործոններ, իսկ ակտիվների և հետհաշվեկշռային հոդվածների յուրաքանչյուր դասի համար՝ պահանջվող ֆինանսավորման գործոններ⁷: Այնուհետև, կապիտալը և պարտավորությունները կշռվում են համապատասխան առկայության գործոններով, իսկ ակտիվները և հետհաշվեկշռային հոդվածները՝ համապատասխան պահանջվող ֆինանսավորման գործոններով, և հաշվարկվում է առկա և պահանջվող ֆինանսավորման աղբյուրների հարաբերակցությունը:

⁷ Այս գործոնները և սահմանված են Բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի կողմից, սակայն կարող են դեռևս ենթարկվել փոփոխությունների:

Հավելված 1. Դրամական հոսքեր և դրանց հարթեցումներ

Բանկերը պետք է ունենան իրենց դրամական հոսքերի կանխատեսումներ, որոնք ծածկում են ապագա սպասվող ներհոսքերն ու արտահոսքերը և սպասվող հոսքերի հարթեցումները: Յուրաքանչյուր կանխատեսում պետք է այնուհետև դասակարգվի ըստ առանձին բիզնես ուղղությունների, ինչը պետք է արտացոլի բանկի բիզնես մոդելը, չափերը և ծառայությունների բարդությունը: Դասակարգումը պետք է թույլ տա իրականացնել ներհոսքերի և արտահոսքերի համարժեք պատկերումներ: Յուրաքանչյուր բիզնես ուղղության գծով իրականացված կանխատեսումները այնուհետև պետք է տարբերակել ըստ ժամանակային հորիզոնների, որոնք պետք է լինեն մի քանի խմբի և տատանվեն, օրինակ մեկ օրվանից մինչև մեկ տարի՝ իրենց մեջ ներառելով հետևյալ միջանկյալ ժամանակահատվածները. մեկ օրից մեկ շաբաթ, մեկ շաբաթվանից մեկ ամիս, 1-3 ամիս, 3-6 ամիս, վեց ամսից մինչև մեկ տարի: Բանկերը ազատ կարող են որոշել իրենց գործունեության համար առավել հարմար ժամանակահատվածները:

Սպասվող դրամական հոսքերը և ապագա համահարթեցումները որոշելու ժամանակ, բանկերը պետք է տարբերակեն պայմանագրային և վարքագծային հոսքերը և ընտրեն առավել հարմար տարբերակը ժամանակի մեջ իրենց իրացվելիությունը գնահատելու համար: Ըստ էության, կարող է էական տարբերություն լինել առօրյա իրական պատկերի և պայմանագրերով նախատեսված պայմանների միջև: Պայմանագրային հոսքերն այն հոսքերն են, որոնք նախատեսված են դրամական հոսքերի պայմանագրային բնութագրիչներով, ինչպիսին է օրինակ ժամկետային ավանդի ժամկետը: Իրականում, ժամկետային ավանդների ժամկետները շատ ժամանակ երկարաձգվում են, և որպես դրա հետևանք, լինում է այն, որ շուկայի նորմալ գործունեության պայմաններում այդ ավանդների միջոցները ավելի երկար ժամանակով են հասանելի լինում բանկերի համար: Այդպիսի վարքագծային փոփոխության ազդեցությունը բանկի համար լինում է այն, որ վերջինս կարողանում է հետաձգել տվյալ ավանդի գծով իր կանխատեսվող արտահոսքերը առավել երկար ժամանակային հորիզոնի մեջ՝ համեմատած այն ժամանակային հորիզոնի, որը պետք է գործեր ավանդի պայմանագրով: Երբ կատարվում են նման կանխատեսումներ, անհրաժեշտ է, որ բանկում առկա լինի դիտարկված նման պահվածքների շարք և հնարավորության դեպքում իրականացվեն համեմատություններ և վերլուծություններ նախկինում առկա փաստացի իրավիճակի հետ: Կանխատեսումները պետք է պատշաճ մակարդակով վերանայվեն, երբ իրականացվում են սթրես-սցենարներ կանխատեսվող դրամական հոսքերի վերաբերյալ:

Յուրաքանչյուր ժամանակային հորիզոնի համար սպասվող դրամական արտահոսքերի մեծությունը պետք է որոշվի և հանվի սպասվող դրամական ներհոսքերի մեծությունից: Եթե սա բերում է որոշակի ֆինանսավորման ճեղքվածքի, այսինքն երբ արտահոսքերը գերազանցում են ներհոսքերը որոշակի կոնկրետ ժամանակային հորիզոնի համար, այս ճեղքվածքը պետք է «լցվի» տարբեր այլ ֆինանսավորման աղբյուրներից հասանելի իրացվելիության միջոցներով, որոնք կազմում են

համահարթեցման միջոցների (counterbalancing capacity) մի մասը կամ բերվել են այլ ժամանակային հորիզոններից:

Նմանատիպ դրամական հոսքերի կանխատեսումները թույլ են տալիս բանկին պատկերացում կազմել իր ապագա իրացվելիության իրավիճակի մասին, պլանավորել իրացվելիության կառավարումը, կառավարել իր գործառնությունները և ձևավորել այլընտրանքային մարտավարություն՝ նախապես բացահայտելով պոտենցիալ խնդիրները: Այն նաև հիմք է հանդիսանում հետագայում սթրես-սցենարների կազմման և իրացվելիության ռիսկի կառավարման որակի բարձրացման, պահանջվող իրացվելիության բուֆերի մակարդակի որոշման համար:

Ըստ էության, պետք է իրականացնել դրամական հոսքերի երկու տիպի կանխատեսումներ՝ շուկայի նորմալ գործունեության դեպքում առօրյա իրացվելիության կառավարման նպատակով, և ստրեսային պայմանների պարագայում՝ հետևելով տարբեր սթրես-սցենարների՝ ստրեսային պայմաններում իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով: Սթրես-սցենարների ներկայացումը պետք է հիմնված լինի բանկի առօրյա բիզնեսի պայմանների վրա: Բոլոր սպասվող հոսքերը բոլոր բիզնես ուղղություններում և բոլոր ժամկետայնությունների համար պետք է այնուհետև վերանայվեն՝ հիմնվելով սթրես-սցենարի մեջ կատարված ենթադրությունների վրա: Սթրես-սցենարների քանակությունը, դրանց բարդությունը և կանխատեսումների մակարդակը պետք է համարժեքորեն արտացոլեն կոնկրետ բանկի բարդության աստիճանը, բիզնես-մոդելը և չափերը:

Հոսքերի բոլոր երեք տեսակները պետք է ենթարկվեն ստրեսային ենթադրությունների՝ որոշելու համար ներհոսքերը, արտահոսքերը և համահարթեցման միջոցները ըստ կոնկրետ սցենարների: Այս վարժությունների ժամանակ ստացված արդյունքները պետք է այնուհետև գործիք հանդիսանան իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումները ձևավորելու ժամանակ՝ ներառյալ բանկի՝ իրացվելիության ռիսկի նկատմամբ հանդուրժողականությունը, ֆինանսավորման քաղաքականությունը և արտակարգ իրավիճակներում բանկի գործողությունների ծրագիրը: Բանկը, որպես արդյունք, պետք է պլանավորի իր իրացվելիության ներգրավման հնարավորությունները, բիզնես-ռազմավարությունը և իր ֆինանսավորման գործիքները ըստ իր՝ ռիսկի հանդեպ ունեցած հանդուրժողականության:

Իրացվելիության բուֆերը, ըստ էության, պետք է հանդիսանա բանկի ֆինանսական միջոցների կարճաժամկետ համահարթեցման մասը: Այն բնորոշվում է, որպես ավելցուկային իրացվելիություն, որը հասանելի է իրացվելիության ստրեսային պայմաններում կարճաժամկետում օգտագործելու համար: Այլ խոսքերով, դա այն իրացվելիությունն է, որը հասանելի է առանց որևէ առանձնահատուկ միջոցառումների ձեռնարկման: Բուֆերի չափերը պետք է սահմանվեն՝ համաձայն որոշված ժամանակային հորիզոնի (time horizon or “survival period”) համար կազմված ստրեսային պայմաններում առաջացող ֆինանսավորման ճեղքվածքի: Համապատասխան ժամանակային հորիզոնը և իրացվելիության բուֆերը չպետք է փոխարինեն այլ միջոցառումների, որոնք իրականացվում են ֆինանսավորման ճեղքվածքը լրացնելու համար, և բանկի ուշադրությունը չպետք է լինի գուտ

գոյատևման ժամանակահատվածն (survival period) անցկացնելը: Բանկի ուշադրությունը պետք է լինի նաև ստրեսային ժամանակահատվածից հետո գործունեության շարունակականության վրա: Այդպիսով, գոյատևման ժամանակահատվածն իրենից ներկայացնում է զուտ այն ժամանակահատվածը, որի ընթացքում, բանկը պետք է կարողանա շարունակել իր գործունեությունը առանց լրացուցիչ ֆինանսավորում ներգրավելու անհրաժեշտության:

Հավելված 2. Ի՞նչ են իրենցից ներկայացնում շուկայում առկա իրացվելի ակտիվները

Շուկայում առկա վերջին տատանումները անհրաժեշտություն են առաջացրել ուշադիր քննելու ակտիվների շուկայի իրացվելիությունը և այն բնութագրերը, որոնք թույլ են տալիս որոշ շուկաներին մնալ իրացվելի նույնիսկ ստրեսների ժամանակ: Բանկերը պետք է ուշադիր լինեն, որպեսզի չշփոթվեն իրացվելի շուկաների ընտրության հարցում տնտեսական աճի ժամանակ, քանի որ ինչպես ցույց տվեցին վերջին իրադարձությունները, որոշ շուկաների իրացվելիությունը կարող է էականորեն անկում ապրել բանկային համակարգի ստրեսի ժամանակ: Նշվածից հետևում է, որ կան որոշ գործոններ, որոնք ազդում են այն բանի վրա, թե ակտիվի շուկան արդյոք կարող է հուսալի համարվել միջոցներ ներգրավելու համար հավանական ստրեսների ժամանակ:

Շուկան նկարագրող իրացվելիության գործոններ

Ակտիվները համարվում են բարձր իրացվելի, եթե դրանք կարող են հեշտությամբ և անմիջապես փոխարկվել կանխիկ դրամի իրենց արժեքի փոքր կորստով կամ առանց որևէ կորստի: Ակտիվի իրացվելիությունը կախված է հանդես եկող սթրես-սցենարից, փոխարկվող ակտիվի ծավալից և ժամանակային գործոնից: Այնուամենայնիվ, կան որոշակի ակտիվներ, որոնք հնարավորություն ունեն հեշտությամբ փոխարկվել կանխիկ դրամի նույնիսկ ստրեսների ժամանակ:

Ակտիվի իրացվելիության բարձրացման վրա ազդող գործոններն են.

Շուկայի հետ կապված գործոններ.

- ակտիվ գործող և մեծ ծավալներ ունեցող շուկայի առկայություն. խոշոր և իրացվելի շուկան հեշտացնում է ակտիվի վաճառքը անհրաժեշտ քանակությամբ և մրցունակ գնով: Շուկայի ծավալները նկարագրող գործոններ են հանդիսանում ինչպես շուկայի գործարքների ծավալները, այնպես էլ ակտիվ մասնակիցների մեծ քանակությունը: Մա նշանակում է, որ շուկայում կան բազմաթիվ «կարծիքներ», և որևէ մեկ մասնակցի համար դժվար կլինի էականորեն նվազեցնել ակտիվի գինը կամ ստանալ այնպիսի տեղեկատվություն, որը հասանելի չի լինի մյուսներին:

- շուկայի ցածր կենտրոնացվածությունը. ակտիվի գնորդների և վաճառողների մեծ և դիվերսիֆիկացված խմբի առկայությունը շուկայում բարձրացնում ակտիվի յուրացվելիությունը, հետևաբար նաև՝ իրացվելիությունը:

Հիմնարար գործոններ

- ցածր վարկային և շուկայական ռիսկ. ակտիվները, որոնք ավելի պակաս ռիսկային են, որպես կանոն, ունեն ավելի բարձր իրացվելիության աստիճան, և նրանց գնային տատանումներն ավելի ցածր են: Վարկային ռիսկի տեսանկյունից, բարձր վարկային ռիսկի վարկանիշ ունեցող թողարկողների ակտիվները համարվում են ավելի իրացվելի: Շուկայական ռիսկի տեսանկյունից, փոքր դյուրացիան, փոքր տատանումները, ցածր ինֆլյացիայի ռիսկը և փոխարկելի և ցածր արտարժույթային ռիսկ կրող արժույթով արտահայտված լինելու գործոնը բարձրացնում են ակտիվի իրացվելիությունը:

- գնահատման հեշտություն. ակտիվի իրացվելիությունը բարձրանում է, եթե շուկայի մասնակիցները հեշտ են համաձայնության գալիս ակտիվի գնահատման հետ կապված հարցերում: Ակտիվների որոշ խմբերի համար ակտիվի սեփականատերերը ունեն դրա արժեքի վերաբերյալ ավելի բարձրորակ տեղեկատվություն, քան շուկայի այլ մասնակիցները: Օրինակ, բանկի՝ իր սեփական վարկերի գնահատումը կարող է էականորեն ավելի լավ տեղեկացվածություն ունենալ, քան շուկայի այլ մասնակիցների կողմից իրականացված գնահատումը: Շուկայական գործիքի բարդությունը ևս նվազեցնում է համոզվածությունը դրա գնահատման նկատմամբ: Առավել բարդ, կոմպլեքս ակտիվների գնահատումը ենթադրում է ավելի շատ դրամական ապագա հոսքերի վերաբերյալ սպասումների ձևավորում: Գործընկերները հակված են կասկածամտությամբ վերաբերվել կոմպլեքս գործիքների գնահատմանը, հետևաբար, մասնավորապես ստրեսային իրավիճակներում, ակտիվի սեփականատերը կարող է հնարավորություն չունենալ իրացնել իր ակտիվը ողջամիտ գնով:

- ցածր կոռելյացիան ռիսկային ակտիվների հետ: Բանկերը պետք է համոզվեն, որ իրենց իրացվելիության բուֆերները «հակադարձ ռիսկի» ենթակա չեն: Մա այն ռիսկն է, որ ակտիվի գինը և իրացվելիությունը դրականորեն և մեծ կոռելյացիայով կապված են բանկային համակարգի ստրեսների հետ: Այսպիսի ակտիվները չպետք է կիրառելի լինեն իրացվելիության բուֆերների համար, քանի որ դրանք կդառնան անիրացվելի հենց այն ժամանակ, երբ անհրաժեշտություն կլինի մոբիլիզացնել բուֆերները:

- զարգացած և ճանաչված շուկայում ցուցակված լինելը. բարձրացնում է ակտիվի թափանցիկությունը, հետևաբար նաև՝ իրացվելիությունը:

Կենտրոնական բանկի կողմից ակտիվի ընդունելիությունը (eligibility)

Կենտրոնական բանկի կողմից ակտիվի ընդունելիությունը իրականացվող գործառնություններում կարող է օգտակար լինել ակտիվի յուրացվելիությունը գնահատելու և դրանով իսկ ակտիվի իրացվելիությանը նպաստելու համար: Ընդունելիությունը կարող է օգնել բարձրացնել տվյալ ակտիվի նկատմամբ շուկայական պահանջարկը, եթե բանկերը հավատան, որ իրենք կարող են իրացվելիություն ներգրավել դրանց միջոցով կենտրոնական բանկից, և եթե կենտրոնական բանկը գործի որպես լրացուցիչ շուկայի մասնակից:

Իրացվելիության փաստացի մատակարարումը

Նույնիսկ եթե շուկան ինքնին լինի իրացվելի, այն հարցը, թե արդյոք ակտիվների կոնկրետ սեփականատերը կարող է օգտագործել այդ ակտիվները կանխիկ միջոցներ ներգրավելու համար, կախված է բանկի գործառնական հնարավորություններից մոբիլիզացնելու իր իրացվելի ռեսուրսները և այլ տնտեսական սահմանափակումներից, որոնք կարող են խոչընդոտել բանկին իրականացնել դա: Շուկայի գիտակ մասնակիցները, որոնք ծանոթ են շուկայի գործառնական փորձին և մյուս մասնակիցներին, հնարավորություն կունենան վարկավորել կամ վաճառել իրենց խնայողությունները առավել արդյունավետ՝ ապահովելով առավել մեծ իրացվելիություն: Բայց ակտիվների սեփականատերերը տարբերվում են նշված գործողությունները իրականացնելու տեսանկյունից. նույն ակտիվը կարող է ունենալ

տարբեր իրացվելիության բնութագրիչներ տարբեր ձեռքբերում և տարբեր պայմաններում: Կարևորվում են հետևյալ գործոնները.

- շուկայում ռեպո գործարքների կնքման հնարավորության պահպանում. շուկայում ռեպո գործարքների արդյունավետ կնքման համար բանկերը պետք է ունենան լավ ձևավորված հարաբերություններ գործընկերների հետ: Ամբողջության նոր հանդիսացող (de novo) գործարքների կնքումը պահանջում է ավելի երկար ժամանակ:

- ակտիվների պարբերաբար փոխակերպում իրացվելիության բուֆերների. որպես իրենց սթրես-սցենարների մաս, բանկերը պետք է ձգտեն պահպանել իրենց պարբերական մասնակցությունը իրենց իրացվելի ակտիվների շուկայում: Սա կապահովի նաև, որ արտակարգ իրավիճակներում բանկերի գործողությունների պլանը հիմնված կլինի առավել իրատեսական գործառնական տեղեկատվության վրա և կնվազեցնի շուկայի հետ անհամապատասխանության հավանականությունը:

- շուկայում մեծ մասնաբաժին չունենալը. եթե բանկը շուկայում ունի համեմատաբար մեծ տեսակարար կշիռ, համեմատած շուկայի իրացվելիության հետ, ապա եթե նույնիսկ ակտիվը լինի համեմատաբար իրացվելի շուկայի նորմալ պայմաններում, այնուամենայնիվ բանկը կունենա որոշակի խնդիրներ իր ակտիվների իրացվելիության հետ, եթե որոշակի յուրացնել իր ակտիվների համեմատաբար մեծ մասը: